standart 2017

Triennial of Contemporary Art in Armenia
Հայաստանի ժամանակակից արվեստի տրիենալե

Անալոգ լեռը

Ժամանակակից արվեստի
փորձառություն

Արվեստների հայկական խորհրդի անունից պատիվ ունեմ ազդարարելու «ՍՏԱՆԴԱՐՏ 2017» ժամանակակից արվեստի միջազգային եռամյա ցուցահանդեսի մեկնարկը:
«ՍՏԱՆԴԱՐՏ» Ժամանակակից արվեստի տրիենալեն մտահղացվել է իբրև շրջիկ պարբերական ցուցահանդես, որը, կախված թեմայից, իր համար ամեն անգամ նոր ուղի է հարթում՝ երկխոսություն ձևավորելով արվեստագետների և տեղանքի միջև, ինչպես նաև՝ կապելով միմյանց զանազան համայնքներ:
Հայաստանն ամուր հիմք հանդիսացավ «ՍՏԱՆԴԱՐՏ» նախագծի մտահղացման և մշակման համար:
Գյումրիի ժամանակակից արվեստի բիենալեն, Երևանի ակտիվ արվեստային իրականությունը, «Ոսկե Առյուծ» մրցանակը, որին երկու տարի առաջ Հայկական տաղավարն արժանացել է Վենետիկի բիենալեում և վերջին տարիների բազում այլ նվաճումները, զգալիորեն դյուրացրել են մեր առջև դրված խնդիրը:
Տրիենալեի անվանումն ինքնին ներշնչված է 1924 թ.-ին տպագրվող հայկական ավանգարդ «ՍՏԱՆԴԱՐՏ» պարբերականից:
«ՍՏԱՆԴԱՐՏ 2017»-ը տեղի է ունենում Հայաստանի հարուստ պատմամշակութային համատեքստում: Հատուկ ընտրված տարածքները վերածվում են հարթակների, ուր արվեստագետները, համադրողները, գրողները, գիտնականները և տեղական համայնքները ստեղծում են արդիական իրականությունների կայուն փոխակերպումներին միտված հարաբերություններ:
Տրիենալեն մեկնարկում է Գյումրիից, որը ժամանակին եղել է Կովկասի ճարտարապետական մարգարիտներից և մշակութային կենտրոններից մեկը, հայտնի իր 19-րդ դարի քաղաքային շինություններով, թատրոններով, տաղանդաշատ բնակիչներով՝ բանաստեղծներով, փիլիսոփաներով, արվեստագետներով: Գյումրիում են ծնվել հոգևոր ուսուցիչ Գեորգի Գյուրջիևն ու նրա զարմիկը՝ քանդակագործ Սերգեյ Մերկուրովը, ինչպես նաև՝ Ասլամազյան քույրերը: Ներկայումս Գյումրին դարձյալ հավակնում է Հայաստանի մշակութային մայրաքաղաքի իր երբեմնի առաջատար դերին և հյուրընկալում «ՍՏԱՆԴԱՐՏ» տրիենալեն՝ երկխոսության հրավիրելով իր պատմական ժառանգության և արվեստի դինամիկ միջավայրի հետ:
«ՍՏԱՆԴԱՐՏ 2017»-ի երթուղին Գյումրիից շարունակվում է Երևան, ապա՝ Երևանից Սևան հանգրվանելով նշանավոր վայրերում, որոնցից են խորհրդային մոդեռնիստական շինությունները՝ «ՀայԱրտ» մշակութային կենտրոնը, որի հարկի տակ է գործել Խորհրդային Միության մեջ ժամանակակից արվեստի միակ թանգարանը, և Սևանի Գրողների ստեղծագործական տունը, որը 2016-ին արժանացավ «Գեթի» հիմնադրամի «Keeping it Modern» դրամաշնորհին՝ մոդեռն ճարտարապետության պահպանության համար:
Արվեստների հայկական խորհրդը հրավիրել է, որպես «ՍՏԱՆԴԱՐՏ 2017»-ի գլխավոր համադրող, 2015 թ. Վենետիկի 56-րդ բիենալեում «Ոսկե Առյուծ» մրցանակը նվաճած Հայկական տաղավարի համադրող Ադելինա Ջուբերյան ֆոն Ֆյուրշթենբերգին, ով ոգեշնչված ֆրանսիացի սյուրռեալիստ գրող և բանաստեղծ Ռընե Դոմալի (1908-1944) «Անալոգ լեռը» անավարտ վեպից, առաջ է քաշել արվեստի բացառիկ մի փորձառության գաղափար: Գործընկեր համադրող է ընտրվել Ռուբեն Արևշատյանը:
Իբրև բանաստեղծական հետազոտություն և ժամանակավոր գոյութենական ապրում՝ «Անալոգ լեռը» մի խորհրդածում է գիտելիքի հետապնդման շուրջ՝ հիմնված այն դրույթի վրա, ըստ որի՝ ստեղծագործ մտքի էությունն ուղղակիորեն առնչվում է մարդու բնույթի ու փորձառության հետ: Արվեստի այս փորձառության արդյունքում լինելու են ժամանակակից արվեստի մի շարք ցուցադրություններ, ինչպես նաև հյուրընկալվող և հայաստանաբնակ արվեստագետների միջև հանդիպումներ և համագործակցություններ, տեղային աշխատանքներ ու պերֆորմանսներ:
«ՍՏԱՆԴԱՐՏ» Ժամանակակից արվեստի տրիենալեն, որը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության Մշակույթի նախարարության հովանու ներքո, հնարավոր է դարձել կազմակերպման գործում ներգրավված հաստատությունների և բազմաթիվ աջակիցների հետ համագործակցության շնորհիվ, իսկ նախաձեռնության հաջողությանը իրենց գիտելիքներն ու միջոցներն են ի սպաս բերել «Արվեստ՝ հանուն աշխարհի» կազմակերպությունը (Ժնև), Արվեստ Հայաստան հիմնադրամը (Երևան), Հասարության հիմնադրամը (Երևան), Ինտելեկտուալ Ռենեսանս հիմնադրամը (Երևան) և Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատունը:
Արվեստների հայկական խորհրդի անունից իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում բոլոր աջակիցներին և տրիենալեի Բարի կամքի դեսպաններին, որոնք հաստատապես հավատացին և իրենց անմնացորդ օժանդակությունը բերեցին այս հավակնոտ նախաձեռնությանը:

Վարդան Կարապետյան
Արվեստների հայկական խորհրդի նախագահ

standart 2017

Triennial of Contemporary Art in Armenia
Հայաստանի ժամանակակից արվեստի տրիենալե

«ԱՆԱԼՈԳ ԼԵՌԸ»
Ժամանակակից արվեստի փորձառություն

1st Edition of STANDART, Triennial of Contemporary Art

Բացումները՝ հուլիսի 20, 22-ին, և սեպտեմբերի 12, 13, 14-ին

Ցուցահանդեսը՝ հուլիսի 21 – դեկտեմբերի 31, 2017 թ.
Մաս առաջին՝ հուլիսի 21 – սեպտեմբերի 30
Մաս երկրորդ՝ սեպտեմբերի 14 – դեկտեմբերի 31

Հայեցակարգի հեղինակ և համադրող՝ Ադելինա Ջուբերյան ֆոն Ֆյուրշթենբերգ

Համահամադրող՝ Ռուբեն Արևշատյան

Կազմակերպություն՝ Արվեստների հայկական խորհուրդ (ԱՀԽ)

ԱՀԽ Նախագահ՝ Վարդան Կարապետյան

ԱՀԽ Տնօրեն՝ Մարինե Հարոյան

Հատուկ շնորհակալություն. Համսիկ Պողոսյան (Հայաստան), Ժան Ալթունյան (Ժնև), Արատտա հիմնադրամ(Հայաստան), ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ (Երևան), Արա Արսլանյան (Նյու Յորք), Անելկա և Ռաֆֆի Արսլանյաններ (Բրյուսել), Թալին Ավագյան և ՀԲԸՄ Շվեյցարիայի մասնաճյուղ (Շվեյցարիա), Զարիկ Բաղդադլյան (Նյու Յորք), Արդեն Շելլեֆյան (Ժնև), Սելլա Թնճուկյան (Բրյուսել), Հայ կամավորների բանկ (Երևան), ԿԱՋԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամ (Հայաստան),EPSON Europe (Հայաստան):

Բովանդակություն

էջ 5 **Մամլո հաղորդագրություն և կոնտակտային տվյալներ**

էջ 9 **Անցկացման վայրեր և ամսաթվեր**

էջ 11 **Մասնակից արվեստագետներ**

էջ 12 **Ցուցահանդեսի կազմակերպիչ խումբ**

էջ 13 **Մաս առաջին.** հուլիսի 21 – սեպտեմբերի 30

Երևան

Գյումրի

էջ 36 **Մաս երկրորդ.** սեպտեմբերի 14 – դեկտեմբերի 31

Էրեբունի (Երևան)

Սևանա լիճ

էջ 45 **Արվեստ Հայաստան հիմնադրամի շնորհառուներ**

էջ 53 **Համադրողներ**

էջ 54 **Կազմակերպիչներ**

«ՍՏԱՆԴԱՐՏ» Ժամանակակից արվեստի առաջին տրիենալե

«ԱՆԱԼՈԳ ԼԵՌԸ»
Ժամանակակից արվեստի փորձառություն
Հայաստան

Բացումները՝ հուլիսի 20, 22, և սեպտեմբերի 12, 13, 14
Ցուցահանդեսը՝ հուլիսի 21 – դեկտեմբերի 31, 2017 թ.

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ: ՀՈՒԼԻՍԻ 20, ԺԱՄԸ 11:00
ԳՐԱՆԴ ՀՈԹԵԼ ԵՐԵՎԱՆ, ԱԲՈՎՅԱՆ Փ. 14, ԵՐԵՎԱՆ

Հայեցակարգի հեղինակ և համադրող՝ Ադելինա Ջուբերյան ֆոն Ֆյուրշթենբերգ

Գործընկեր համադրող՝ Ռուբեն Արևշատյան

www.standart-armeniatriennale.net

Արվեստների հայկական խորհուրդը (ԱՀԽ)՝ ՀՀ Մշակույթի նախարարության, «Արվեստն աշխարհի համար» կազմակերպության, Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատան, «Հայկական արվեստի հիմնադրամի» և այլ մասնավոր գործընկերների և աջակիցների հետ հատուկ համագործակցությամբ, ներկայացում է «ՍՏԱՆԴԱՐՏ» Ժամանակակից արվեստի առաջին տրիենալեն Հայաստանում, որը տեղի կունենա 2017 թ. հուլիսից մինչև դեկտեմբեր:

ՍՏԱՆԴԱՐՏ Ժամանակակից արվեստի տրիենալեն շրջիկ պարբերական ցուցահանդես է, որը, կախված ցուցահանդեսի թեմայից, ամեն անգամ իր համար նոր ուղի է հարթում Հայաստանով մեկ: Տրիենալեի անվանումը ներշնչված է 1924 թ.-ին տպագրվող «Ստանդարտ»՝ հայկական ավանգարդ պարբերականի անունից:
ՍՏԱՆԴԱՐՏ-ը շեշտում է Հայաստանի պատմամշակութային հարուստ համատեքստը, իսկ շրջիկ բնույթի շնորհիվ ներգրավում ավելի լայն և բազմազան հասարակական շերտերի՝ հնարավորություններ ստեղծելով արվեստագետների, գրողների, համադրողների, գիտնականների, տեղական համայնքների և այցելուների միջև երկխոսության և փոխգործակցային հարաբերությունների ձևավորման համար:

ՍՏԱՆԴԱՐՏ առաջին տրիենալեի համար ԱՀԽ ղեկավարությունն իբրև գլխավոր համադրող է ընտրել Ադելինա Ջուբերյան ֆոն Ֆյուրշթենբերգին, որը եղել է նաև 2015 թ. Վենետիկի 56-րդ բիենալեում «Ոսկե Առյուծ» մրցանակը նվաճած Հայկական տաղավարի համադրողը:

Ֆրանսիացի սյուրռեալիստ գրող և բանաստեղծ Ռընո Դոմալի (1908-1944) «Անալոգ լեռը» անավարտ վեպից ոգեշնչված՝ ՍՏԱՆԴԱՐՏ-ը տեղի կունենա Արարատ լեռան շրջակայքի ինքնատիպ պատմամշակութային վայրերում:

Իբրև բանաստեղծական հետազոտություն և ժամանակավոր գոյութենական ապրում՝ «Անալոգ լեռը» բացահայտում է գիտելիքի որոնման արտացոլանքները՝ հիմնված այն դրույթի վրա, ըստ որի՝ ստեղծագործ մտքի ոգին ուղղակիորեն առնչվում է մարդու էությանն ու փորձին:

Կայուն զարգացման և մասնակցության ոգով տոգորված՝ ՍՏԱՆԴԱՐՏ Ժամանակակից արվեստի տրիենալեն նպատակ ունի կամրջելու անցկացման զանազան վայրերն ու արվեստի գործերը՝ անմիջական երկխոսություն ձևավորելով տարբեր մշակութային ավանդույթների տեր մասնակից արվեստագետների և համադրողների միջև, ինչը կհանգեցնի փորձի փոխանակման և համագործակցության Հայաստանի մշակութային գունագեղ հարթակի վրա:

Դրա արդյունքն են լինելու մի շարք ժամանակակից արվեստի ցուցահանդեսներ, ինչպես նաև հյուրընկալվող և հայաստանաբնակ արվեստագետների միջև հանդիպումներ և համագործակցություններ, տեղային աշխատանքներ ու կատարումներ: Սեպտեմբերին կթողարկվի կայք, որում տեղակայված կլինի ճամփորդական մատյանը՝ նկարներով հանդերձ, և գիրք, որին իրենց ներդրումը կբերեն զանազան արվեստագետներ և տարբեր ոլորտների մասնագետներ՝ բազմազան մոտեցումներ առաջարկելով «Անալոգ լեռան» թեմայի շուրջ:

Մաս առաջին. Բացումները՝ 2017 թ. հուլիսի 20-22-ին

Երևան

– **ԳԱՍՊԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ** (Բրազիլաբնակ լուսանկարիչ, 1899-1966), Հեռավոր պատառիկներ, մոդեռնիստի հետադարձ հայացք, ՀԲԸՄ-ի Հայաստանյան գլխամասում, Մելիք-Ադամյան փ. 2/2: Համադրող՝ Ռուբեն Արևշատյան:

– **ԻԼՅԱ և ԷՄԻԼԻԱ ԿԱԲԱԿՈՎՆԵՐ** (Ռուսաստան/ԱՄՆ), Մոցարտի երաժշտությունը լսելիս խնձոր վերցնելու 20 եղանակ և Համերգ ճանձի համար. ինստալացիաներ Կլորներում, Մաշտոցի պ. 7ա («ՀայԱրտ» Մշակութային կենտրոն, նախկինում՝ Ժամանակակից արվեստի թանգարան): Բացման ընթացքում Երևանի Չայկովսկու երաժշտական հատուկ դպրոցի սաները կենդանի համերգ կտան:

Գյումրի

- Արվեստի գործեր, կատարումներ և աշխատանոցներ, որոնք ստեղծվելու են Գյումրիի արվեստագետ հանրույթի հետ համագործակցությամբ: Մասնակից արվեստագետներ՝ ԱՅՐԻՆ ԱՆԱՍՏԱՍ և ՌԵՆԵ ԳԱԲՐԻ (Պաղեստին/Իրան/ԱՄՆ), ՌԻԿԱՐԴՈ ԱՐԵՆԱ (Իտալիա), ԲԵՆՋԻ ԲՈՅԱՋՅԱՆ (Ֆինլանդիա/Պաղեստին), ՋՈՒԶԵՊԵ ԿԱԿԱՎԱԼԵ (Ֆրանսիա/Իտալիա), ՄԱՐՏԱ ԴԵԼ ԱՆՋԵԼՈ (Իտալիա), ՏԻԲՈ ԴԸ ՋԱԼԼՈՒԼԻ (Ֆրանսիա), ԱԼԵՔՍԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ (Հայաստան), ԳՈՀԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Հայաստան), ՄԻՔԱՅԵԼ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ (Հայաստան/Իտալիա),ՄԱՐԻԱՅԱԳԱՐԻ(Հունաստան) և այլք: Ժողովրդականճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան և Սերգեյ Մերկուրովի թանգարան, Հաղթանակի պող. 47:

- Արվեստագետ Վահագն Ղուկասյանի հետ համադրողական համագործակցությունը տեղի կունենա Երանուհի և Մարիամ Ասլամազյան քույրերի պատկերասրահում (Աբովյան փ. 242), որտեղ երկու նկարչուհիների մշտական հավաքածուի ընտրանին կզուգադրվի հետևյալ արվեստագետների գործերի ընտրանիների հետ՝ ՌՈԶԱՆԱ ՓԱԼԱԶՅԱՆ (Բրազիլիա): և Կցուցադրվեն նաև §Արվեստ՝ հանուն աշխարհի¦ արտադրության կարճամետրաժ ֆիլմեր, այդ թվում՝ ՄՈՒՐԱԼԻ ՆԱԻՐ (Հնդկաստան), ԻԴՐԻՍԱ ՈՒԵԴՐԱՈԳՈ (Բուրկինա Ֆասո), ՋԱՖԱՐ ՓԱՆԱՀԻ (Իրան), և ՋԻԱ ՋԱՆԳ-ՔԵ (Չինաստան):

Մաս երկրորդ. Բացումները՝ 2017 թ. սեպտեմբերի 12-13-14-ին

Էրեբունի (Երևան)

– **ՖԵԼԻՉԵ ՎԱՐԻՆԻ** (Շվեյցարիա), տեղայնացված ինստալացիա Երևանի երկաթուղային կայարանում: Կազմակերպիչ՝ Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատուն:

Սևանա լիճ

– **Դեժա-վու ՍՏԱՆԴԱՐՏ**, տեսաինստալացիաներ՝ ՋԵՐԱՐԴ ԲԸՐՆ (Իռլանդիա), ՅՈՋԵՖ ԴԱԲԵՐՆԻԳ (Ավստ-րիա), ԻԳՈՐ ԳՐՈՒԲԻՉ (Խորվաթիա), և ՄԱՐԿՈՒՍ ՇԵՐԵՐ (Ավստրիա), ինչպես նաև ճարտարապետական նախագծեր՝ ԼԵՎՈՆ ՉԵՐՔԵԶՅԱՆ (Հայաստան), ԳԵՎՈՐԳ ՔՈՉԱՐ (Հայաստան) և ՄԻՔԱՅԵԼ ՄԱՋՄԱՆՅԱՆ (Հայաստան): Համադրող՝ Ռուբեն Արևշատյան, վայր՝ Գրողների ստեղծագործական տուն:

2017 թ. հուլիսից մինչև դեկտեմբեր

Երևան, Գյումրի, Կապան

– Արվեստ Հայաստան հիմնադրամի Արվեստագետների առաջին բաց մրցույթի շնորհառուները՝ ԱՐՏԼԱԲԵՐԵՎԱՆԸ, ԱՅՐԻՆ ԱՆԱՍՏԱՍԸ և ՌԵՆԵ ԳԱԲՐԻՆ, ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, ՓԻՐՈՒԶԱ ԽԱԼԱՓՅԱՆԸ, ԳՈՀԱՐ ՍՄՈՅԱՆԸ և ՄԻԿԱ ՎԱԹԻՆՅԱՆԸ, կներկայացնեն իրենց նախագծերը հուլիսի և դեկտեմբերի միջև, Հայաստանի տարբեր վայրերում և քաղաքներում:

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Արվեստների հայկական խորհուրդ
Արվեստների հայկական խորհուրդը Երևանում գործող շահույթ չհետապնդող կազմակերպություն է: Բազմապրոֆիլ մշակութային գործունեության միջոցով Արվեստների հայկական խորհուրդը նպաստում է Հայաստանում մշակութային քաղաքականությանը և կրթական մարտավարությունների զարգացմանը, փոխգործակցային կապ է ստեղծում վիզուալ և կատարողական արվեստների բնագավառում տեղական և միջազգային փորձի միջև: Անհատ գործընկերների աջակցությամբ և ՀՀ Մշակույթի նախարարության հետ հատուկ համագործակցությամբ՝ ԱՀԽ-ն 2017-ին մեկնարկում է ՍՏԱՆԴԱՐՏ ժամանակակից արվեստի առաջին տրիենալեն:
Մարինե Հարոյան, տնօրեն, marineharoian@gmail.com

Արվեստ՝ հանուն աշխարհի
«Արվեստ՝ հանուն աշխարհի» հասարակական կազմակերպությունը հիմնվել 1995 թվականին, Ժնևում, արվեստի և մշակույթի համընդհանուր լեզվի միջոցով բովանդակալից և տևական երկխոսություն ձևավորելու առաքելությամբ: «Արվեստ՝ հանուն աշխարհի» կազմակերպությունը, կենտրոնանալով մերօրյա գլխավոր հիմնախնդիրների վրա, մոբիլիզացնում է արվեստը, կինոն և ժամանակակից մշակույթը: Հիմնադրումից ի վեր՝ կազմակերպությունն իրականացրել է բազմաթիվ շրջիկ ցուցահանդեսներ և նկարահանել ավելի քան երեսուն կարճամետրաժ ֆիլմ: 1998 թվականից կազմակերպությունը կանոնավորապես համագործակցում է Սան Պաուլուի Առևտրի հանրային ծառայության (SESC São Paulo) տարածաշրջանային ճյուղի հետ: 2005 թվականին Իտալիայում հիմնվել է «Արվեստ՝ հանուն աշխարհի. Եվրոպա» քույր կազմակերպությունը:
2015 թվականին կազմակերպությունն իր տնօրեն Ադելինա Ջուբերյան ֆոն Ֆյուրշթենբերգի ղեկավարությամբ Վենետիկի բիենալեում կազմակերպել է Հայաստանի տաղավարը, որն արժանացել է «Ոսկե առյուծ» մրցանակի՝ իբրև լավագույն ազգային տաղավար:
Նունու Լուան, համակարգող, projects@artfortheworld.net / www.artfortheworld.net

Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատուն
Շվեյցարիայի դեսպանատունն աջակցում և խրախուսում է Շվեյցարիայի ու Հայաստանի միջև տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրթական հարաբերությունները: 1988 թվականից ի վեր՝ Շվեյցարիան համագործակցում է Հայաստանի հետ մարդասիրական ու զարգացման բնագավառներում: Դեսպան Լուկաս Գասսերն ու նրա թիմը տրիենալեի գործընկերներն են և իրականացնելու են Ֆելիչե Վարինիի ինստալացիան Երևանի երկաթուղային կայարանում (Էրեբունի համայնք): Շվեյցարիայի դեսպանատունը «Ստանդարտ» ժամանակակից արվեստի առաջին տրիենալեին աջակցում է նաև որպես հովանավոր:
Աննա Հովհաննիսյան, anna.hovhannisyan@eda.admin.ch www.eda.admin.ch/armenia

Արվեստ Հայաստան հիմնադրամ
Արվեստ Հայաստան հիմնադրամը անկախ հասարակական կազմակերպություն է, որը նպաստում է Հայաստանում ժամանակակից արվեստի զարգացմանը: Երևանում գործող հիմնադրամը 2016 թվականին ստեղծել են Դավիթ և Ռաֆայել Նազարյանները՝ Հայաստանի մշակույթով հետաքրքրված ներդրողների խմբի հետ միասին: Հիմնադրամի առաքելությունն է՝ օժանդակել ժամանակակից արվեստի ոլորտում Հայաստանի ստեղծագործող անհատներին և բացահայտել նրանց ստեղծագործական ներուժը երկրի ներսում ու դրա սահմաններից դուրս: Հիմնադրամն արվեստագետներին աջակցում է դրամաշնորհներով, ինչպես նաև արվեստի և կրթական նոր ծրագրերով, որոնցում ներգրավված են տեղացի և դրսեկ արվեստագետներ, համադրողներ, տեսաբաններ:
Անուշ Զեյնալյան, տնօրեն, a.zeynalyan@foundationaa.com / www.foundationaa.com

Հասրաթյան հիմնադրամ
Հասրաթյան հիմնադրամի առաջնային առաքելությունն է 1962-1975թթ Երևանի քաղաքապետ Գրիգոր Հասրաթյանի ժառանգության ուսումնասիրելն ու պահպանելը: Նրա ղեկավարությամբ՝ 1960 և 70-ական թվականներին, Երևանն արագորեն վերափոխվել է ակտիվ մշակութային միջավայրի: 1972 թ. Հայաստանի մայրաքաղաքում հիմնադրվեց Խորհրդային միության առաջին և միակ ժամանակակից արվեստի թանգարանը: Երևանը վերափոխվեց մոդեռնիստական նշանավոր շինությունների միջոցով: Ծաղկեցին արվեստները, գրականությունն ու կինոն և քաղաքը դարձավ խոշոր գիտական կենտրոն: Այս ժամանակաշրջանի Երևանին բնորոշ էր նորարարությունների մշտական փնտրտուքը: Հասրաթյան հիմնադրամը, շարունակելով Գրիգոր Հասրաթյանի գործունեությունը, խթանում է ժամանակակից արվեստի և ճարտարապետության բնագավառներում հետազոտությունները և նպատակ է հետապնդում Երևանն ու Հայաստանը կրկին դարձնելու նորարարությունների կենտրոն:

Ինտելեկտուալ Ռենեսանս հիմնադրամ
Ինտելեկտուալ Ռենեսանս հիմնադրամը ակտիվորեն պահպանում և զարգացնում է հայկական մշակույթն ու մտավոր ժառանգությունն ամբողջ աշխարհում: Այն խթանում է երաժշտության և գրականության բնագավառներում ուսումնասիրությունները: Գործունեության սկզբից հիմնադրամը զարգացրել է կարևոր նախագծեր, որոնք միտված են հայկական երաժշտական ժառանգությունը թվայնացնելուն:
Սկսած 2015-ից հիմնադրամը ձեռք է բերել ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում գտնվող Վիլյամ Սարոյանի առանձնատունը՝ նպատակ ունենալով այն վերածելու Սարոյանի ժառանգության ուսումնասիրման կենտրոնի և հուշային թանգարանի:
Ինտելեկտուալ Ռենեսանս հիմնադրամը նաև համագործակցում է Վիքիմեդիա Հայաստանի հետ՝ խթանելու հայերեն վիքիպեդիայի զարգացմանը:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐ ԵՎ ԱՄՍԱԹՎԵՐ

«Անալոգ լեռը» կանցկացվի հուլիսի 21-ից մինչև դեկտեմբերի 31-ը հետևյալ վայրերում՝

Մաս առաջին. հուլիսի 21 - սեպտեմբերի 30

ԲԱՑՈՒՄՆԵՐԸ՝ 2017 Թ. ՀՈՒԼԻՍԻ 20, 22-ին

ԵՐԵՎԱՆ

- ՀԲԸՄ Հայաստանյան գլխամաս

Մելիք-Ադամյան փ. 2/2, Երևան

Ավելին՝ էջ 12-ում

- «ՀայԱրտ» Մշակութային կենտրոն

Մաշտոցի պող. 7ա, Երևան

Ավելին՝ էջ 14-ում

ԳՅՈՒՄՐԻ

- Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան
- Սերգեյ Մերկուրովի թանգարան

Հաղթանակի պող. 47, Գյումրի

Ավելին՝ էջ 16-ում

- Երանուհի և Մարիամ Ասլամազյան քույրերի պատկերասրահ:

Աբովյան փ. 242, Գյումրի

Ավելին՝ էջ 26-ում

Մաս երկրորդ. սեպտեմբերի 14 - դեկտեմբերի 31

ԲԱՑՈՒՄՆԵՐԸ՝ 2017 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12,13,14-ին

ԷՐԵԲՈՒՆԻ (Երևան)

- Նկարներ **Երևանի երկաթուղային կայարանի** ճարտարապետական միջավայրում

Սասունցի Դավիթ հրապարակ, Էրեբունի (Երևան)

Ավելին՝ էջ 35-ում

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ

- Գրողների ստեղծագործական տուն

Թերակղզի, 1505, Սևան

Ավելին՝ էջ 37-ում

ՄԱՍՆԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

ԵՐԵՎԱՆ

ԳԱՍՊԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ (Բրազիլաբնակ լուսանկարիչ, 1899-1966), *Հեռավոր պատառիկներ,* մոդեռ-նիստի հետադարձ հայացք, **ՀԲԸՄ**-ի Հայաստանյան գլխամասում: Համադրող՝ **Ռուբեն Արևշատյան**:

ԻԼՅԱ և ԷՄԻԼԻԱ ԿԱԲԱԿՈՎՆԵՐ (Ռուսաստան/ԱՄՆ), *Մոցարտի երաժշտությունը լսելիս խնձոր վերց-նելու 20 եղանակ* և *Համերգ ճանճի համար.* ինստալացիաներ **Կլորներում** («ՀայԱրտ» Մշակութային կենտրոն, նախկինում՝ Ժամանակակից արվեստի թանգարան):

ԳՅՈՒՄՐԻ

Արվեստի գործեր, կատարումներ և աշխատանոցներ, որոնք ստեղծվելու են Գյումրիի արվեստագետ հանրույթի հետ համագործակցությամբ: Մասնակից արվեստագետներ՝ **ԱՅՐԻՆ ԱՆԱՍՏԱՍ և ՌԵՆԵ ԳԱԲՐԻ** (Պաղեստին/Իրան/ԱՄՆ), **ՌԻԿԱՐԴՈ ԱՐԵՆԱ** (Իտալիա), **ԲԵՆՋԻ ԲՈՅԱՋՅԱՆ** (Ֆինլանդիա/Պաղեստին), **ՋՈՒԶԵՊԵ ԿԱԿԱՎԱԼԵ** (Ֆրանսիա/Իտալիա), **ՄԱՐՏԱ ԴԵԼ ԱՆՋԵԼՈ** (Իտալիա), **ՏԻԲՈ ԴԸ ՋԱԼԼՈՒԼԻ** (Ֆրանսիա), **ԱԼԵՔՍԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ** (Հայաստան), **ԳՈՀԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** (Հայաստան), **ՄԻՔԱՅԵԼ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ** (Հայաստան/Իտալիա), **ՄԱՐԻԱՑԱԳԱՐԻ**(Հունաստան) և այլք: Ժողովրդականճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան և Սերգեյ Մերկուրովի թանգարան, Հաղթանակի պող. 47:

Արվեստագետ Վահագն Ղուկասյանի հետ համադրողական համագործակցությունը տեղի կունենա Երանուհի և Մարիամ Ասլամազյան քույրերի պատկերասրահում (Աբովյան փ. 242), որտեղ երկու նկարչուհիների մշտական հավաքածուի ընտրանին կզուգադրվի հետևյալ արվեստագետների գործերի ընտրանիների հետ՝ **ՌՈԶԱՆԱ ՓԱԼԱՋՅԱՆ** (Բրազիլիա): և Կցուցադրվեն նաև §Արվեստ՝ հանուն աշխարհի¦ արտադրության կարճամետրաժ ֆիլմեր, այդ թվում՝ **ՄՈՒՐԱԼԻ ՆԱԻՐ** (Հնդկաստան), **ԻԴՐԻՍԱ ՈՒԵԴՐԱՈԳՈ** (Բուրկինա Ֆասո), **ՋԱՖԱՐ ՓԱՆԱՀԻ** (Իրան), **և ՋԻԱ ՋԱՆԳ-ՔԵ** (Չինաստան):

ԷՐԵԲՈՒՆԻ (Երևան)

ՖԵԼԻՉԵ ՎԱՐԻՆԻ (Շվեյցարիա), տեղայնացված ինստալացիա Երևանի երկաթուղային կայարանում: Կազմակերպիչ՝ **Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատուն**:

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ

Դեժա-վու ՍՏԱՆԴԱՐՏ, տեսաինստալացիաներ՝ **ՋԵՐԱՐԴ ԲԸՐՆ** (Իռլանդիա), **ՅՈԶԵՖ ԴԱԲԵՐՆԻԳ** (Ավստրիա), **ԻԳՈՐ ԳՐՈՒԲԻՉ** (Խորվաթիա), և **ՄԱՐԿՈՒՍ ՇԵՐԵՐ** (Ավստրիա), ինչպես նաև ճարտարապե- տական նախագծեր՝ **ԼԱՈՆ ՉԵՐՔԵԶՅԱՆ** (Հայաստան), **ԳԵՎՈՐԳ ՔՈՉԱՐ** (Հայաստան) և **ՄԻՔԱՅԵԼ ՄԱՋՄԱՆՅԱՆ** (Հայաստան): Համադրող՝ **Ռուբեն Արևշատյան**, վայր՝ **Գրողների ստեղծագործա- կան տուն:**

ԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ԿԱՊԱՆ

Արվեստ Հայաստան հիմնադրամի Արվեստագետների առաջին բաց մրցույթի 6 շնորհառուները՝ **ԱՐՏԼԱԲԵՐԱԱՆԸ, ԱՅՐԻՆ ԱՆԱՍՏԱՍԸ** և **ՌԵՆԵ ԳԱԲՐԻՆ, ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, ՓԻՐՈՒԶԱ ԽԱԼԱՓՅԱՆԸ, ԳՈՀԱՐ ՍՄՈՅԱՆԸ** և **ՄԻԿԱ ՎԱԹԻՆՅԱՆԸ**, կներկայացնեն իրենց նախագծերը հու- լիսի և դեկտեմբերի միջև, Հայաստանի տարբեր վայրերում և քաղաքներում:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ.
Գյումրիի արվեստագետների աշխատանքների ցուցադրության վերջնական վայրերը ենթակա են փոփոխության:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Նախագծի հեղինակ Համագործակից	**Արվեստների հայկական խորհուրդ** **Արվեստ՝ հանուն աշխարհի**
Արվեստների հայկական խորհրդի նախագահ Արվեստների հայկական խորհրդի տնօրեն	**Վարդան Կարապետյան** **Մարինե Հարոյան**
Հայեցակարգի հեղինակ և համադրող	**Ադելինա Ջուբերյան ֆոն Ֆյուրշթենբերգ**
Համահամադրող	**Ռուբեն Արևշատյան**
Կազմակերպություններ	**Արվեստների հայկական խորհուրդ** **Արվեստ՝ հանուն աշխարհի** **Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատուն** **Արվեստ Հայաստան հիմնադրամ** **Հասարթյան հիմնադրամ** **Ինտելեկտուալ Ռենեսանս հիմնադրամ**
Տեխնիկական անձնակազմ	**Յորգոս Էֆստաթուլիդիս,** Կոնստրուկտիվիստ **Դիմիտրիս Պապադոպուլոս**, Կոնստրուկտիվիստ **Իգորիս Մարկովաս** (Իլյա և Էմիլիա Կաբակովների համար) **Տիմոթե Խալազոնիտիս** (Ջուզեպե Կակավալեի համար)
Տեխնիկական համակարգող (Գյումրի)	**Աշոտ Միրզոյան**
Տեխնիկական օգնական (Երևան)	**Էդմոն Քեշիշյան**
Երևանի համակարգող	**Ռիտա Շարոյան** «ՀայԱրտ» Մշակութային կենտրոնի տնօրեն
Գյումրիի համակարգող	**Սոնա Հարությունյան** Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանի տնօրեն **Արշակ Մանուկյան** Սերգեյ Մերկուրովի տուն-թանգարանի տնօրեն **Վահագն Ղուկասյան** Երանուհի և Մարիամ Ասլամազյան քույրերի պատկերասրահի տնօրեն
Օգնականներ (Արվեստ՝ հանուն աշխարհի)	**Ալեքսիս Գասպարյանց** **Ֆեդերիկա Լո Կարմինե** **Նունու Լուան**
Օգնականներ (Երևան)	**Տաթև Հարոյան** **Տաթևիկ Մանուկյան** **Հայկ Մկրտչյան** **Հռիփսիմե Նավասարդյան**
Գրաֆիկական և տեղեկատու նյութերի դիզայն	**Դոկ Լևին** **Կորալի Միլիեր** **Լեո Կետգլա**
Գրաֆիկական դիզայներ (Հայաստան)	**Արսեն Կիրակոսյան**
Թարգմանիչ	**Վազգեն Ղազարյան**
Հայերեն նյութերի խմբագիր	**Գոհար Գալստյան**
Մեդիա գործընկեր	**ՊանԱրմենիան Մեդիա Գրուպ, Երևան**
Մամուլի հետ կապ	**Մարինե Հարոյան**, Արվեստների հայկական խորհուրդ **Ալեքսիս Գասպարյանց**, Արվեստը՝ հանուն աշխարհի **Ֆեդերիկա Լո Կարմինե**, Արվեստը՝ հանուն աշխարհի
Սոցիալական մեդիայի պատասխանատու	**Իննա Մկրտչյան** **Սթիվեն Օքսներ**
Վեբ դիզայներ	**Խարիս Կարանցաս,** BLIND Studio, Թեսալոնիկ
Կայքի համակարգում	**Նունու Լուան**

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ.
Հուլիսի 21 - Սեպտեմբերի 30

Բացումներ

Երևան՝ Հուլիսի 20, հինգշաբթի

Գյումրի՝ Հուլիսի 22, շաբաթ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. հուլիսի 21 - սեպտեմբերի 30

Բացումը՝ հուլիսի 20-ին, հինգշաբթի 16:00-18:00

ԵՐԵՎԱՆ

ԳԱՍՊԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ (Բրազիլիա)

«Տարածական դրվագներ» (1941 - 1959)

Բրազիլաբնակ հայազգի մոդեռնիստ լուսանկարչի հետահայաց ցուցադրություն

Համադրող՝ **Ռուբեն Արևշատյան**

Վայրը՝

ՀԲԸՄ Հայաստանյան գլխամաս

Խորհրդարանի նախկին նստավայր (1906-2000 թթ.) այս շենքը ՀԲԸՄ-ի կողմից նորոգվել և բացվել է 2015 թվականին՝ դառնալով պատմական ճակատի և ապակու արդիական համադրման օրինակ, երբ շենքի ծավալով մեկ զուգադրվում են անցյալը և ներկան: Շենքում գործում է մեծ ցուցասրահ և պրոյեկցիոն տարածք: Մինչև 2017 թվականի հուլիսը, այստեղ գործելու է «ԱՓ»ի առաջին դիզայն տաղավարը՝ մեծածավալ ցուցահանդես, որում ներկայացված են հայկական և միջազգային բազմաթիվ դիզայներների՝ նորարարության և համագործակցության ոգով ներշնչված գործերը:

ԳԱՍՊԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ



Աբստրակտ, 1948
Լուսանկար, 42.4 x 31.6 սմ



Շեղում, 1949
Լուսանկար, 32.7 x 43.5 սմ

Եռակի, 1958
Լուսանկար, 29.2 x 38.8 սմ

Ծնվել է Սան Պաուլուում, Բրազիլիա (1899 - 1966)

«Տարածական դրվագներ» (1941- 1959)

«Հյուծող շտապողականության մեջ շարժվելով և տագնապներում հոգեմաշ լինելով՝ մարդը չի տեսնում, չի զգում, չի ընկալում այն հրաշքները, որոնք ամեն քայլափոխի, ամեն պահի և ամեն րոպե կյանքը պարգևում է նրան»:
Գասպար Գասպարյան

ՍՏԱՆԴԱՐՏ Ժամանակակից արվեստի տրիենալեի շրջանակում Գասպար Գասպարյանի ցուցահանդեսը կդառնա հայ հասարակության առաջին ծանոթությունը 20-րդ դարի ամենանշանավոր հայազգի արվեստագետներից մեկի հետ, որի ազդեցությունը բրազիլական լուսանկարչության զարգացման գործում անգնահատելի է: Սան Պաուլուի լուսանկարչական դպրոցի հիմնադիրներից մեկը լինելով՝ Գասպարյանը ոչ միայն փորձարկումներ է կատարել ձևերի, լույսի, օպտիկական աղճատումների և վերացական ձևափոխումների հետ, որոնք այդքան հատուկ էին 20-րդ դարի կեսի լուսանկարչությանը, այլև իր ստեղծագործություններում մշակել է ինքնուրույն դիտանկյուն՝ կանոնակարգելով իրականության հատվածական ընկալմանը նետված նորովի հայացքը: Առարկաները դիտող աչքի և դրանց համատեքստի միջև արվեստագետի ստեղծած նրբին անջրպետը ստեղծում է տարածության վիզուալ զգացողություն, որը հրավիրում է երևակայական փոխազդեցության ու անշտապ շփման: Սա հեռավորություն է սուբյեկտիվ ընկալման և կանոնակարգված նոր իրականության միջև:

Գասպար Գասպարյանի լուսանկարները կարելի է տեսնել մշտական հավաքածուներում և նշանավոր միջազգային թանգարաններում, ինչպիսիք են Նյու Յորքի Ժամանակակից արվեստ թանգարանը, Լոնդոնի «Թեյթ մոդեռն» թանգարանը, Սան Պաուլուի Արվեստի թանգարանը և այլն:

2016. *Արվեստանոցում*, «Թեյթ մոդեռն» թանգարան, Լոնդոն: *Ընդմիշտ մոդեռն*, կազմակերպիչ՝ Itaú Cultural (Բրազիլիա):
2015. *Ջորջիո Արմանի Acqua#6 նախագիծ*, Փարիզ Photo, Փարիզ: *Դիմանկարներ. Վերջին խորագիրը*, «Բերգամին» պատկերասրահ, Սան Պաուլու, Բրազիլիա: *Սև քառակուսու, աբստրակտ արվեստի և հասարակության արկածները 1915-2015,* Վայթչափելի պատկերասրահ, Լոնդոն:
2014. *Ժամանակակից ոսպնյակը. Ինտերակցիոն լուսանկարչությունը և «Թեյթի» հավաքածուն,* «Թեյթ Սենտ-Իվ» պատկերասրահ, Անգլիա: *Սուբյեկտիվ լուսանկարչություն – 2*, Քիքեն պատկերասրահ, Բեռլին, Գերմանիա: *Urbes Mutantes. Լատինաամերիկյան լուսանկարչությունը 1941–2012 թթ.*, Լուսանկարչության միջազգային կենտրոն, Նյու Յորք, ԱՄՆ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. հուլիսի 21 - սեպտեմբերի 30

Բացումը՝ հուլիսի 20-ին, հինգշաբթի
16:00-18:00

ԵՐԵՎԱՆ

ԻԼՅԱ ԵՎ ԷՄԻԼԻԱ ԿԱԲԱԿՈՎՆԵՐԻ (Ռուսաստան) ինստալացիաները

«Մոցարտի երաժշտությունը լսելիս խնձոր վերցնելու 20 եղանակ»

և *«Համերգ ճանճի համար»*

Համադրող՝ Ադելինա Ջուբերյան ֆոն Ֆյուրշթենբերգ

Վայրը՝

«ՀայԱրտ» Մշակութային կենտրոն

Ճարտարապետներ Ջիմ Թորոսյանի և Գևորգ Արամյանի հեղինակած Ժամանակակից արվեստի թանգարանը Խորհրդային Միության առաջին մասնագիտացված կենտրոնն էր ժամանակակից և մոդեռն արվեստի ասպարեզում և իր ոճում բացառիկ է մնացել հետագա բոլոր 20 տարիներին:

«…Սկզբից ի վեր՝ թանգարանի գաղափարն ուտոպիա էր: Նախաձեռնողները չունեին ոչ արվեստի գործեր ձեռք բերելու միջոցներ, ոչ դրանք ցուցադրելու համար շենք: Մինչդեռ, նրանք ունեին ավելի արժեքավոր ու կարևոր բան՝ հավատում էին, որ Հայաստանին անհրաժեշտ է տեսնել ու հասկանալ իր ժամանակակից արվեստի նոր պատկերը…»

(Ալեքսանդր Կամենսկի, արվեստի ռուս քննադատ, 1979):



ԻԼՅԱ ԵՎ ԷՄԻԼԻԱ ԿԱԲԱԿՈՎՆԵՐ

Մոցարտի երաժշտությունը լսելիս խնձոր վերցնելու 20 եղանակ, «Գարաժ» ժամանակակից արվեստի թանգարան, Մոսկվա, 2015

Կամերային համերգ ճանճի համար, Ցուգի Արվեստի տուն, Շվեյցարիա, 2005

Կաբակովները ծնվել են Դնեպրոպետրովսկում (Ռուսաստան): Այժմ ապրում և աշխատում են Լոնգ Այլենդում (Նյու Յորք):

Մոցարտի երաժշտությունը լսելիս խնձոր վերցնելու 20 եղանակ, 1997

Մոցարտի երաժշտությունը լսելիս խնձոր վերցնելու 20 եղանակ-ում՝ դիտորդը տեսնում է անսովոր մեծ մի սեղան, որն անհամաչափ տեղ է գրավել սենյակում: Սեղանի կենտրոնում ափսեով խնձոր կա դրված, որին անհնար է հասնել: Սենյակում լսվում է Մոցարտի երաժշտությունը: Սեղանին՝ ափսեների կողքին դրված տեքստերում բացատրված է խնձորին հասնելու մի որևէ «եղանակ», որն ամեն անգամ նոր է և անակնկալ՝ փիլիսոփայական, լեզվաբանական, մոգական, տեխնոլոգիական, հոգեբանական, քաղաքական և այլն: Յուրաքանչյուր բացատրություն նկարագրված է արտասովոր մանրամասնությամբ և շատ լրջորեն: Ինչ-որ իմաստով, բոլոր 20 եղանակները միասին՝ ներկայացնում են հայթայթման հնարավոր բոլոր ձևերի փոքրիկ հանրագիտարան՝ բացառելով, իհարկե, ամենապարզ բայց անհասանելի ձևը՝ ձեռքը պարզելու և խնձորը վերցնելու տարբերակը:

Համերգ ճանճի համար, 1986

Փոքր շրջանով դասավորված տասներկու նոտակալ, յուրաքանչյուրի ետևում՝ աթոռ, կամերային համերգի պատրաստ: Նոտակալներին դրված են գորշ ստվարաթղթից էջեր, որոնց վրա վերևից նկար է, վարից՝ տեքստ: Նոտակալների կազմած շրջանի կենտրոնում ամենավերևից՝ մոտ 3.5 մետր բարձրության վրա, անշարժ կախված է ճանճը (թղթին նկարված) և չնայած իր փոքր չափսերին՝ շատ հեշտ է նկատվում, քանի որ նոտակալները դասավորված են կատարյալ շրջանով և իրենց թեքությամբ ուղղում են ուշադրությունը դրա կողմը: Ամեն ինչ շատ լուրջ է երևում ու պատկառելի, թվում է՝ համերգն ուր-որ է՝ սկսվելու է: Բայց ուղիղ կենտրոնում կախված ճանճն ի՞նչ գործ ունի այդտեղ: Պատրաստվում է ղեկավարե՞լ երաժիշտներին, երբ նրանք զբաղեցնեն իրենց տեղերը: Թե՞ անշարժ կախված է օդում՝ կլանված գեղեցիկ երաժշտությամբ, լիակատար մոռացության մեջ, համարելով, որ համերգը տեղի է ունենում իր համար կամ նույնիսկ իր պատվին: Բացմանը, որը տեղի կունենա 19:30, Երևանի Չայկովսկու անվան երաժշտական հատուկ դպրոցի սաները կենդանի համերգ կտան այդտեղ:

Իլյա և Էմիլյա Կաբակովները ծնունդով Ռուսաստանից, իսկ այժմ Ամերիկայում բնակվող արվեստագետներ են, որոնց ստեղծագործություններում զուգորդված են առօրեականի և կոնցեպտուալի տարրերը: Թեև նրանց աշխատանքները խորապես արմատավորված են սովետական սոցիալ-մշակութային համատեքստում, որում արվեստագետները հասակ են առել, նրանց գործերը, միևնույն է, շարունակում են համընդհանուր նշանակություն ունենալ:

2017. *Իլյա և Էմիլիա Կաբակովներ. Ոչ բոլորն են տարվելու ապագա*, «Թեյթ Մոդեռն», Լոնդոն, Մեծ Բրիտանիա: Հիրշհորնի թանգարան, Վաշինգտոն, ԱՄՆ: *AQUA, Արդի արվեստագետներն ու ջրի հիմնախնդիրները,* Պենթես դղյակ, Ժնև:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. հուլիսի 21 - սեպտեմբերի 30

Բացումը՝ հուլիսի 22-ին, շաբաթ
12:00-17:00

ԳՅՈՒՄՐԻ

Գյումրին՝ նախկին Ալեքսանդրապոլը, Հայաստանի երկրորդ քաղաքն է ըստ մեծության և 1988 թվականին տուժել է սոսկալի երկրաշարժից: Սփյուռքը մինչ օրս մեծ օժանդակություն է հատկացնում քաղաքի վերականգնմանը:
1997 թվականին Գյումրիում բացվել է Ժամանակակից արվեստի կենտրոն, որում մինչ օրս կազմակերպվել են միջազգային բազմաթիվ բիենալեներ: Գյումրին նշանավոր հայ շատ բանաստեղծների, այդ թվում՝ Հովհաննես Շիրազի հայրենիքն է: Այդտեղ է ծնվել նաև 20-րդ դարի ամենանշանավոր հոգևոր ուսուցիչներից մեկը՝ Գեորգի Գյուրջիևը:

Ներկայացվելու են հետևյալ արվեստագետների գործերը, կատարումներ և աշխատանոցները՝

ԱՅՐԻՆ ԱՆԱՍՏԱՍ ԵՎ ՌԵՆԵ ԳԱԲՐԻ
(Պաղեստին/Իրան/ԱՄՆ)
ՌԻԿԱՐԴՈ ԱՐԵՆԱ (Իտալիա)
ԲԵՆՋԻ ԲՈՅԱՋՅԱՆ (Ֆինլանդիա/Պաղեստին)
ՋՈՒԶԵՊԵ ԿԱԿԱՎԱԼԵ (Ֆրանսիա/Իտալիա)
ՄԱՐՏԱ ԴԵԼ ԱՆՋԵԼՈ (Իտալիա)
ՏԻԲՈ ԴԸ ՋԱԼԼՈՒԼԻ (Ֆրանսիա)
ԱԼԵՔՍԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ (Հայաստան)
ԳՈՀԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Հայաստան)
ՄԻՔԱՅԵԼ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ (Հայաստան/Իտալիս)
ՄԱՐԻԱ ՑԱԳԱՐԻ (Հունաստան)

Համադրող՝ Ադելինա Ջուբերյան ֆոն Ֆյուրշթենբերգ

Վայրը՝

Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան և Սերգեյ Մերկուրովի թանգարան

1872 թվականին կառուցված այս տունը ժամանակին պատկանել է Գյումրիի ամենաունևոր քաղաքացիներից մեկին՝ Պետրոս Ձիթողցյանին, որն ապրելիս է եղել, երբ քաղաքը կոչվում էր Ալեքսանդրապոլ: Թանգարանում ի ցույց է դրված հարուստ տանտիրոջ առանձնատան սենյակների սկզբնական ձոխությունը: Շենքը կառուցված է Շիրակի նշանավոր կարմիր տուֆից:

Խորհրդային Միության ամենահռչակավոր մոնումենտալ քանդակագործներից մեկը՝ Սերգեյ Դմիտրիի Մերկուրովը, ծնվել և մեծացել է Գյումրիում: Նա ուներ հունա-հայկական ծագում և Գեորգի Գյուրջիևի ազգականն էր: Նրա տունը, որը կառուցվել է 1896 թվականին Մերկուրովների ընտանիքի կողմից, քաղաքի ճարտարապետական կտավի մի մասն է և թանգարանի է վերածվել 1984 թվականին:

ԱՅՐԻՆ ԱՆԱՍՏԱՍ ԵՎ ՌԵՆԵ ԳԱԲՐԻ

Այրին Անաստասը ծնվել է Բեթղեհեմում (Պաղեստին): Ռենե Գաբրին ծնվել է Թեհրանում (Իրան): Ապրում և աշխատում են Նյու Յորքում:

Իսկ դու, դո՞ւ ինչ ես փնտրում, 2017

Բռնության, ավերումի, կորուստների, սեփականաշնորհման, պարսպապատման և սովորական կյանքի իմաստի կորստի ահագնացող դրսևորումներով լեցուն աշխարհում, արվեստագետները գործածել են Ռենե Դոմալի «Անալոգ լեռը» վեպի վերջին և անավարտ գլխի, Իսկ դու, դո՞ւ ինչ ես փնտրումե նախատեսված վերնագիրը՝ իբրև մի շարժիչ, որով կարելի է ուսումնասիրել սեփական ներկան ու միջավայրը: Այստեղ ցուցադրվող աշխատանքով արվեստագետները փորձում են ի մի բերել իրենց մտորումների մի մասը՝ Դոմալի հարցին պատասխանելով Հայաստանի տարբեր վայրերում գյուղացիների հետ շփումների հուշերով, նոթերով ու պատառիկներո:

Զգայուն համայնք, Ժամանակակից արվեստի պետական պատկերասրահ, Հռոմ, 2017: Ֆելբախի Փոքր քանդակ- ների 13-րդ տրիենալե, Ֆելբախ, 2016: *Հայություն*, «Ոսկե առյուծ» մրցանակակիր Հայկական տաղավար, Վենե- տիկի 56-րդ բիենալե, 2015: *Երևացող իրերի բացակա- յությամբ,* Շարժայի բիենալե 12, 2015: dOCUMENTA 13 (2012):





Իսկ դու, դո՞ւ ինչ ես փնտրում
Նախագծի վիզուալ փաստագրում

ՌԻԿԱՐԴՈ ԱՐԵՆԱ

Ծնվել է 1979 թվականին, Միլանում, որտեղ և ապրում ու աշխատում է:



Անանուն, 2017

Աշխարհացույց - Անալոգ լեռան լեռնագնաց արշավախմբի վիզուալ քրեստոմատիա, 2017

Ինստալացիայի ներշնչանքի աղբյուրը «Անալոգ լեռն» է՝ լեռնագնացի արկածների մասին պատմող սիմվոլիստական մի վեպ, որը հեղինակի՝ Ռենե Դոմալի անժամանակ մահվամբ մնացել է անավարտ:

Աշխարհացույց - «Անալոգ լեռան» լեռնագնաց արշավախմբի վիզուալ քրեստոմատիան Դոմալի վեպի տողերով և դրա բացակայող հատվածով ներշնչված վիզուալ համառոտագրի օգնությամբ երևակայությունից ծնում է խորհրդավոր մի տոպոգրաֆիա ,Անալոգ լեռանե գագաթի համար, որը նույնանման մի պատճառով պետք է անհրաժեշտորեն պեղել ու վերածել հանքի: Մտնելով արտաքին հմայիչ տեսարանի ներքին խորքերը՝ վերելքը շուքով վերածվում է վայրէջքի դեպի անդունդ, ուր վերին երկինքները լուծարվում են:

Ցուցահանդես LuDD-ում, Անանուն, 2017

Իր աշխատանքներում Ռիկարդո Արենան զարգացնում է ստեղծագործական մի սկզբունք՝ հիմնված տարատեսակ փաստաթղթերի կուտակման, համադրման և հետազոտման վրա: Հավաքելիս, փաստաթղթերը բացահայտում են պատահական և կանխավ անպատկերացնելի ներուժ, որը և դառնում են ակտիվ գործոն՝ պատկերելու համար կապերի նոր և իրավիճակային ուղիներ, որոնք զարգանում են արդեն ներշնչման սկզբնական ազդակից անկախ: Մի կողմից՝ ուսումնասիրության առարկաների ինտուիտիվ հավաքման, իսկ մյուս կողմից՝ ինտուիտիվ քայլերի միջոցով դրանց ներքին վերակազմավորման միջև հաստատուն շարժումը խտանում է պատմողական մի կառույցի, ինչը դառնում է հիմնարար սկզբունք իր աշխատանքների համար, որոնք ներառում են կոլաժներ, ֆիլմեր, կտավներ, արխիվային իրեր, տեքստեր և անիմացիաներ, և բոլորը միասին փոխերկխոսությամբ ամբողջանում են տեսողական մի համաստեղության մեջ, որը շարժիչ է դառնում բազմակի վկայակոչումների և մեկնաբանությունների համար:

ORIENT 1 – Հարագո ծով, 2016
MAXXI մրցանակ, կաղր ցուցահանդեսից, Հռոմ

2016. Maxxi մրցանակ, Maxxi թանգարան, Հռոմ, Իտալիա: Արվեստի կվադրիեննալե, Ցուցահանդեսների պալատ, Հռոմ, Իտալիա,
2015. *Կավիլոն,* Վիաֆարինի, Միլան, Իտալիա: *Ինքն իր վրա նստած մարդը*, Սանդրետո Ռե Ռեբաուդենգո կազմակերպություն, Տուրին, Իտալիա,
2014. *Երկրի պատկերներ*, MART Տրենտոյի և Ռովերետոյի Արդի և Ժամանակակից արվեստի թանգարան, Իտալիա,
2013. *Կածանների այգին*, OCT Ժամանակակից արվեստի տերմինալ, Շանխայ, Չինաստան: *Խաղադաղար*, Քսաներորդ դարի թանգարան, Միլան, Իտալիա,
2011. *Muerte Dual Ellero*, Վուսմանի թանգարան, Բուենոս Այրես, Արգենտինա, և «Իտալիան աշխարհում» տաղավար, Վենետիկի 54-րդ բիենալե,
2007. *Աստծո աղացը դանդաղ է աղում*, Քնափի թանգարան, Ամստերդամ, Նիդեռլանդներ:

ԲԵՆՋԻ ԲՈՅԱՋՅԱՆ

Ժամանակավոր ավերակը գործից, 2014
Թանաք՝ թղթի վրա, 55×75 սմ

Խցանված գործից, 2017
Գրիչ, թանաք և ջրաներկ՝ թղթի վրա (մանրամասն)
61×48.3 սմ

Ծնվել է 1983 թվականին, Երուսաղեմում, որտեղ և ապրում ու աշխատում է:

Նստվածքային կերպափոխումներ, 2017

Նախագծով առաջարկվում է պատկերել լանդշաֆտի հիշողության մեջ անցյալի փորագրած ձյուղավորումների մնացորդները՝ որպես Անալոգ լեռանը տանող թեական ուղու հատած տարածք, անցյալի փորձերի «սուզված» ավերակների և նրանց տարածքայնության հետքերի որոնման արկածների շարք:

Բոյաջյանի գործերը հետազոտությունների հենքի վրա կառուցվող նախագծեր են, որոնք խորամուխ են լինում պատմական ժառանգության, տարածքի, ճարտարապետության և բնապատկերի թեմաներում: Նա հիմնվում է նկարի և գծանկարի վրա՝ որպես իր նյութը փոխանցող առաջնային գործիքների: Նրա իրապաշտական կտավները որսում են լքված, բուսականությամբ ծածկվող և մերօրյա ծավալման ճնշման ներքո անհետացող ավերակների պատկերները, որ դեռ հանդիպում են Երուսաղեմի մերձակայքում (օրինակ՝ Վադի Ալ-Շամիում կամ հին հռոմեական ակվեդուկում): Նա փաստագրում է դրանք իբր արդեն անցյալի գիրկն անցած հուշարձաններ:

Փարիզի «Լա Վիլետ» ճարտարապետության պետական բարձրագույն դպրոցում (ENSAPLV) Բոյաջյանն ուսանել է ճարտարապետություն՝ մասնագիտանալով հետկոնֆլիկտային տարածաշրջանների քաղաքային սոցիոլոգիայում: Մասնակցել է Երիտասարդ արվեստագետների Արվեստի նախագծով առերեսման ծրագրին, որը կազմակերպվել է Նիկոսիայում՝ EMAA-ի և Rooftop Theatre Group-ի կողմից: Պաղեստինում 2015 թ. պարգևատրվել է Իսմայիլ Շամմութի անվան մրցանակով:

2017. *AQUA*, *Արդի արվեստագետներն ու ջրի հիմնախնդիրները,* Պենթես դղյակ, Ժնև: *Աններդաշնակություն,* Ալ-Մամալ և Անդեիլ պատկերասրահներ, Երուսաղեմ:
2016. *Հետքեր*, Արվեստասենյակ, Կիրենիա, Կիպրոս: Jerusalem Show VIII: Before and After Origins, Ժամանակակից արվեստի Ալ-Մամալ հիմնադրամ, Երուսաղեմ, Իսրայել: *Մեզ դպրոց էին խոստացել, մեզ լողավազան էին խոստացել*, «Սկանե» արվեստի միություն, Լունդ, Շվեդիա: *Անցման գծեր (մեդիա պատկերայնությամբ)*, Միտիլինիի քաղաքային պատկերասրահ, Լեսվոս, Հունաստան:
2015. *Գիծ*, Արվեստասենյակ, Կիրենիա, Կիպրոս: *Ոտք դնելով սահմանից անդր*, եվրոպական միջերկրական արվեստի ասոցիացիա (EMMA), Նիկոսիա: *Համատեղ կրոնական վայրեր*, եվրոպական և միջերկրական քաղաքակրթությունների թանգարան (MuCEM), Մարսել:
2014. *Առանցքին պտտվելով,* Մարիո Մաուրոների Ժամանակակից արվեստի պատկերասրահ, Վիեննա, Ավստրիա: Jerusalem Show VII: Fractures, Ժամանակակից արվեստի Ալ-Մամալ հիմնադրամ, Երուսաղեմ, Իսրայել:

ՋՈՒԶԵՊԵ ԿԱԿԱՎԱԼԵ

Երգի նրբանցք, 2016
Գույներ և գրաֆիտի պատի վրա
300 սմ x 50 մ:
Փարիզի իտալական մշակութային ինստիտուտ, 2016



Հայաստան, Օսիպ Մանդելշտամ. ակնարկներ, 2014, գրաֆիտ, նկար

Ես մի անգամ, 2014
Որմնանկար և գրաֆիտի
250 սմ x 800 սմ
Դե Կարոլիսի պալատ, UniCredit Հռոմ, 2014

Ծնվել է 1960 թվականին Նեապոլի Աֆրագոլա արվարձանում (Իտալիա): Ապրում և աշխատում է Բարիում և Փարիզում:

Հայաստան, Օսիպ Մանդելշտամ. ակնարկներ, 2014

2014 թվականին՝ Նեապոլի գրախանութներից մեկում Օսիպ Մանդելշտամի «Ճամփորդություն Հայաստան» ժողովածուն գտնելուց ավելի քան քսան տարի անց, Կակավալեն որոշում է գրաֆիտի փոշով պատկերել 1930-31 թթ. Հայաստան կատարած այցելության առթիվ բանաստեղծի թողած տողերի անգլերեն և իտալերեն տարբերակները: Բանաստեղծական տողերը փոխադրելով գրաֆիտի պատկերների՝ Կակավալեն հեղինակել է 5 մեծ ալբոմ (30x43 սմ), որոնցից յուրաքանչյուրը պարունակում է գրական գործի վիզուալ թարգմանությամբ լի քսանհինգ կրկնակ էջ:

Հայաստան IV, 2017

Ծիրանի ծառը Հայաստանում վերածվում է դուդուկի, որի միջոցով մարդու շունչը ձայներ է արձակում դեպի լեռնաշղթաները: Օսիպ Մանդլեշտամի «Հայաստան IV» բանաստեղծությունը Գյումրի քաղաքի քարե պատերից մեկին փորագրող մարդու ձեռքի միջոցով ուղերձ է հղում իր ուրիշների աչքերին: Սա է Ջուզեպե Կակավալեի Անալոգ լեռը՝ բնությունից բնություն:

Ջուզեպե Կակավալեի աշխատանքները տարուբերվում են ժամանակի ու տարածության մեջ: Պատերով սփռվող նյութի փառահեղությունը և գույների նրբությունը դիտողին ընկղմում են անրջային ու կլանող աշխարհը: Կենտրոնանալով որմնանկարի հնավանդ տեխնիկայի վրա՝ Կակավալեն իրեն վերագրում է թարգմանչի ու մեկնաբանի դեր, որն ասպարեզը հանձնում է մեր գոյությունը պարուրող տարածություններին՝ տեղափոխելով դրանք պատերի վրա, ուր պարփակված է «բնության ու սրբազանի քերթողական արվեստը», որը շփում է փնտրում բառի և ձևի, պոեզիայի և ժեստի միջև:

Փարիզի Դեկորատիվ արվեստների պետական բարձրագույն դպրոցում Կակավալեն դասավանդել է որմնանկարչություն և նկարչություն, Յունեսկոյի հետ համատեղ մի շարք հետազոտություններ իրականացրել Աթոս լեռան վանական ինքնավարությունում, Ֆլանդրիայում ապրելով՝ ուսումնասիրել վաղ նիդեռլանդական արվեստն ու բազմաձայն երգեցողությունը: Ներկայացրել է Իտալիան Վենետիկի 56-րդ բիենալեում, ուր իր ստեղծած կառույցը հնարավորություններ էր բաց անում դիզայնի, որմնանկարչության, պոեզիայի և լուսանկարչության առջև՝ Մասիմո Գեցիի բանաստեղծությունը ներկայացնելու գործում:

2016. *Երգի նրբանցք*, Կոմպոզիտոր Ստեֆանո Գերվազոնիի հետ կառուցված օպերա, Փարիզի իտալական մշակութային ինստիտուտ, Ֆրանսիա: *Ժամեր և օրեր*, MACRO Հռոմի ժամանակակից արվեստի թանգարան, Իտալիա: *Ապակե տուն*, CIRVA Կանտինիի թանգարան, Մարսել, Ֆրանսիա:

ՄԱՐՏԱ ԴԵԼ ԱՆՋԵԼՈ

Կախազարդեր, 2017
Ինստալացիայի տեսքը COSMO պատկերասրահում

A4 2089 կարիատիդ, 2015
Թուղթ և գունավոր տպագրություն, մեխեր, 200 x 200 սմ, Ինստալացիայի տեսքը Ֆորտունիի պալատում, Վենետիկ

Ձեռնկալ, 2016
Յուղաներկ կտավի վրա, 80 x 140 սմ

Ծնվել է 1970 թ. Իտալիայի Պավիա քաղաքում:
Ապրում և աշխատում է Իտալիայի Միլան քաղաքում:

Կենդանի կոլաժ, 2017

Կենդանի կոլաժ: Գրեթե բնական չափերի ավելի քան 100 գունավոր և սև-սպիտակ պատկերները, կտրված և հայելային տպված, կախված են եռաչափ տարածության մեջ: Մարմնի մասերը հատվում են միմյանց հետ առարկաներով ու տարրերով, որոնք ունեն զանազան ծագում, գալիս են տարբեր դարաշրջաններից ու տեղակայված են կարգի, անկարգի և պատահականի միջև:

Սուլոցը՝ 100 դրամ, 2017
Ալեքսեյ Մանուկյանի հետ համագործակցությամբ

Սուլոցը՝ 100 դրամ փողոցային ներկայացմանը արվեստագետները պիտի սուլոց հանեն հայկական ծիրանի կորիզով և իտալական կաղինով՝ վաճառելով դրանք անցորդներին: Գնել կարող է յուրաքանչյուրը, իսկ դրա նվագից առաջացած սուլոցը կներկայացնի քամուն ուղղված յուրատեսակ կանչ՝ դառնալով ստեղծագործության մասը:

Դել Անջելոյի ստեղծագործություններում հաճախ կրկնվող տարրերից են մոնումենտալ չափերի կանացի մարմինները, որոնք պատկերված են մերձեցման պահերին, սպիտակ ֆոնի վրա շեշտված, հաճախ՝ անվայելուչ դիրքերում: Մարմինը հենց մարմինն է որ կա և ոչինչ ավելին: Հեղինակը կենտրոնանում է ձևերի և դրանց ֆիզիկական ներկայության վրա, որ հարաժամանակյա է՝ իբրև գոյաբանական ստատուսի խորհրդանիշ: Աշխատանքը մեկնարկում է թվային լուսանկարով, որը վերամշակվում ու վերադասավորվում է համակարգչով: Նկարչություն ինքնին վերջին փուլն է այն գործընթացի, որը երբեմն ընդհատվում է նախքան նկարային վիճակի հասնելը՝ նյութականանալով որպես աուդիո կամ վիդեո գործեր, և ցածր որակով տպագրություն սևագրի թղթերի կամ անձեռոցիկների վրա: Իրեղենացման այս փուլը բնութագրվում է պիքսելների մասնատմամբ և փոխակերպմամբ արտահայտիչ տարրերի: Առարկաների հետ աշխատելուն զուգահեռ՝ Դել Անջելոն նաև սուբյեկտիվացնում է մարմինը պերֆորմանսների միջոցով:

2017. *Կախազարդեր*, COSMO, Միլան, Իտալիա: *Հայելային պատկեր*, Թունի թանգարան, Շվեյցարիա:
2016. *Մի կամ մյուս օր...*, Քաղաքային պալատ, Ֆորտունագո, Իտալիա: *Մարմին-մարմնի*, «Պասաջի» պատկերասրահ, Պիզա, Իտալիա: *Փխրուն*, համագործակցություն Իտալական մշակութային ինստիտուտի և Սան Ֆրանցիսկոյի Չինական մշակութային կենտրոնի միջև: *Բաբելոնյան աշտարակ*, Լուկեզիի նախկին ֆաբրիկա, Պրատո, Իտալիա: *Սուլոցը՝ մի ևրո.* պերֆորմանս, «Մանիֆեստա» ժամանակակից արվեստի եվրոպական բիենալե, Ցյուրիխ, Շվեյցարիա: *Մաշկ, աշխատանոց*, Բրյուսել, Բելգիա: *Ունկնդրում. Երևակայական ներկայացում,* Assab One կազմակերպություն, Միլան:
2015. *Արվեստը՝ սենյակում. ֆիգուր*, «Պասկինելի» հաստատություն, Միլան: *A4-564*, Սուրբ Ռեպարատայի Արվեստի միջազգային դպրոց, Ֆլորենցիա: *Մարդկային մարմնի ձեռնարկ. Հղիի կերպի առաջին ուսումնասիրություն*, Թատերական փառատոն 10-11-12/09/2015, MACRO Հռոմի ժամանակակից արվեստի թանգարան, Իտալիա:

ՏԻԲՈ ԴԸ ՋԱԼԼՈՒԼԻ

Ծնվել է 1987 թվականին, Փարիզում (Ֆրանսիա): Ապրում և աշխատում է Փարիզում և Աթենքում:



Վեց դրոշի տեսություն #1, 2017 գուաշ՝ կտավի վրա, 160 x 250 սմ

Հայելու բոլոր երեսներին, 2017

Քարտեզը բաղկացած է բազմաթիվ շերտերից, որպեսզի ճշտորեն սահմանազատի իրեն իբրև միջանկյալ տարածք: Որմնանկար, որի վրա ծավալվում են դրա բազում դերակատարները: Աշխարհի մնացորդների կնքադրոշմ, միջանկյալ տարածք, որ կարող է իրականություն դառնալ միայն սեփական նյութն ու պատմությունն ապակենտրոնացնելով: «Ճամփաբաժան կնիքներ» կոչվող պատկերները, որոնք կախված են դրա վրա, մեկնարկային հարթակներ են՝ մուտքի ու ելքի կետեր, որոնցով հնարավոր է շարունակաբար ընդլայնել քարտեզը: Պատմություն՝ փոփոխական երկրաչափությամբ, նույնքան բազմազան, որքան փոխկապակցված ու համաձայնեցված: «300 նավերն աշխարհին տվեցին նրա նոր կառուցվածքը»: Այս ձևով, Ռենե Դոմալի արշավախումբը միշտ ճանապարհին է:

138 թվացյալ պատկերներ, Festival Baleapop, 2014

Տիբո դը Ջալլուլիի աշխատանքը ցուցաբերում է անհավանական ախորժակ, քաղաքականը նվաճելու ներքին պահանջ, ծայրահեղ ձախականի սոցիոլոգիական խառնաշփոթը հասկանալու խորը կարիք, պատմության բուլիմիկ վերընթերցում (իր բեղերը Հիտլերի վրա փակցնելու կամ երբեք գոյություն չունեցող փոքր խմբեր հորինելու աստիճանի): Նա փորձում է մտածել, հավատալ, մարտնչել, մերժել պոպուլիզմի բոլոր երեսները, հարցականի տակ դնել Մարսել Դուշամի հեծանվի անիվը, որը կորցրել է ոտնակները, ծաղրել նրանց, ում Ժան Դուբուֆեն կոչել է «Տեսակավորող գործակալներ…»: Դը Ջալլուլիի կոլաժները բաղկացած են պատկերներից, տեքստերից ու լուսանկարներից և ասես մտավոր մի տարածք լինեն, մտքի ու քաղաքական քայլերի պատմության քարտեզագրություն, որոնց մոզաիկայում ոչ մի կտոր իրականում չի վերաբերում մյուսին, աշխարհի դրամատիկ ընկալում, որի սահմանները տարբերվում են մեր իմացածից:

Սա երևակայական ստեղծագործություն է. մաս 1+2, 2012

2016. *Rainbow ranch hand խմբային ցուցահանդես*, FRAC Nord pas de Calais, Դանքիրք: FIAC, Քաղաքային պահոց, Փարիզ: *Խմբահին ցուցահանդես*, Aline Vidal պատկերասրահ, Փարիզ: *Ծածուկ այգի*, *Տաղավարի երկուշաբթիները*, Cité internationale des arts, Փարիզ: *Հրեշների միջով դեպի աստղերը*, Michel Journiac պատկերասրահ, Փարիզ: *Double Je*, Տոկիոյի պալատ, Փարիզ: *Գորգանախշ*, 22RUEMULLER, Փարիզ:
2015. *FFOMECBLOT*, Clovis XV, Բրյուսել, Բելգիա: *Ընտանեկան հարցեր II*, De la charge, Բրյուսել, Բելգիա: Elevations, Palais Idéal du Facteur Cheval, Օտ-ռիվ, Ֆրանսիա:

ԱԼԵՔՍԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1974 թվականին Ռուսաստանի Սանկտ-Պետերբուրգ քաղաքում: Ապրում և աշխատում է Գյումրիում:

Ուրբան դրոշմանիշ, 2017

Ստեղծագործական դաշտում արվեստագետը կիրառել է տարբեր արտահայտչամիջոցներ, իրականացրել ինստալացիա-պերֆորմանսներ, լենդ-արտ, ֆոտո, վիդեո նախագծեր: Ստեղծագործական որոնումների արդյունքում, Ալեքսեյը առաջին անգամ արտատպելով մետաղադրամները, սկսում է կիրառել ֆրոտաժ՝ արտատպման տեխնիկան: 2010 թվականին նա ֆրոտաժել է Գերմանիայի, Դրեզդենի և Բեռլինի դիտահորերը: Այսպես արվեստագետը մուտք է գործում ուրբանիստական միջավայր, և նրա կողմից իրականացրած ֆրոտաժը դառնում է նրա ստեղծագործական կարիերայի այցետոմսը:
Արվեստագետը ֆրոտաժ-պերֆորմանսներ իրակացրել է եվրոպական և ասիական տարբեր պատմական քաղաքներում՝ Շուշի, Լյուբլին, Կարս, Դիարբեկիր-Տիգրանակերտ, Բեռլին, Կոպենհագեն, Նանսի, Բրյուսել, Ստամբուլ և այլն: Հայաստանում իրականացվող «Ստանդարտ» խորագրով տրիենալեի շրջանակներում Ալեքսեյը ֆրոտաժելու է Գյումրու Աբովյան փողոցի և Մերկուրովի թանգարանի՝ պատմական արժեք ներկայացնող հուշարձանների դետալները, փողոցային տարածքի հատվածները, որոնք արվեստագետի կողմից դիտարկվելու են որպես ուրբանիստական դրոշմանիշեր: Ֆրոտաժելով քաղաքը և տեղափոխելով այն մեկ այլ ցուցադրական միջավայր՝ ամբողջովին փոխվում է ուրբան-դրոշմանիշերի արժեքը, կասկածի տակ դնելով վերջիններիս ներկայությունը, կամ լիովին իմաստազրկվում է այն, կամ նոր իմաստներ բացահայտելու հնարավորություն ընձեռում:

Ալեքսեյ Մանուկյանը բնակվում և ստեղծագործում է Գյումրիում: 2008 թվականին ավարտել է Գյումրու գեղարվեստի պետական ակադեմիան, 2008 թվականից աշխատում է «Էմիլի Արեգակ» կենտրոնում՝ որպես արտ-թերապիստ, 2006 թվականից համարվում է «5րդ հարկ» ստեղծագործական խմբի համահիմնադիրը, 2013 թվականից՝ Գյումրու «Պադվալ» գալերեայի և 2016 թվականից՝ «Արվեստի գոտի» բացօթյա արվեստանոցի հիմնադիրը: Սկսած 2008 թվականից մասնակցում է միջազգային նախագծերի, ցուցահանդեսների:

Վերջին աշխատանքները և ցուցադրությունները՝
2014. *Արվեստի նախազգուշացում աշխարհին*, ինստալացիա, Փարիզ, Ֆրանսիա, Նյու Յորք, ԱՄՆ:
2013. *Կոնտեյներ*, ինստալացիա, արոպական պառլամենտ, Բրյուսել, Բելգիա: *Դեմք*, պերֆորմանս, Գյումրի:
2012. *Կովկասի շուրջ*, ինստալացիա, Tequali, Վրաստան:
2011. 5-րդ հարկ, կոլեկտիվ, Նանսի, Ֆրանսիա:





Բեռլինի և Դրեզդենի դիտահորի կափարիչի ֆրոտաժ, 2010

Բրյուսելի դիտահորի կափարիչի ֆրոտաժ, 2012

ԳՈՀԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1992 թվականին, Գյումրիում, որտեղ և ապրում ու աշխատում է:

Տարարա, 2017

Տարարա, 2017

«Անալոգ լեռը». Ժամանակակից արվեստի փորձառություն նախագծի շրջանակներում Գոհար Մարտիրոսյանը համագործակցում է իտալացի արվեստագետ Մարտա Դել Անջելոյի հետ: Երկուսով նրանք միասին քայլելու են դեպի Արագածի գագաթը: Նրանց մարմնի ծանրությունը, նրանց ոտնահետքերի թեթև դրոշմները ձևափոխելու են լեռան մակերևույթը՝ ձևավորելով յուրատեսակ քանդակ:

Գոհար Մարտիրոսյանը կոնցեպտուալ արվեստագետ է, ապրում և աշխատում է Գյումրիում և հետաքրքրված է այն պատճառներով ու հանգամանքներով, որոնք պայմանավորում են հասարակության պատկերացումը ինչ-ինչ բաների մասին, փորձում է գտնել վիզուալ միջոցներ, որոնցով կարելի է երկխոսություն ու հարաբերություններ ձևավորել՝ կիրառելով արվեստը որպես գործիք, որը կօգնի փոխել և վերածնել արխետիպերը: Իր աշխատանքներում նա փորձում է հարաբերակցություն հաստատել անհատի հոգեբանական ենթագիտակցության հետ, որն ապա վերափոխում է գիտակցության՝ ուղի բացելով գործողության առջև, ինչն ազատություն է շնորհում մարդու երևակայությանը:

Միևնույն ժամանակ, Գոհարի աշխատանքները ոչ ստանդարտ տեղադրություն են գտնում բաց տարածքներում, ուր նա հետազոտում է միջավայրի ազդեցությունը անհատի զարգացման վրա:

Արվեստի ակադեմիան ավարտելուց հետո, Գոհարը բաց է արել անհատական ցուցահանդեսներ, որոնցից է «Փարդա» նախագիծը (2015): Համագործակցում է Gallery 25 (Գյումրի) և Կարոյան (Երևան) պատկերասրահների հետ:

ՄԻՔԱՅԵԼ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ



Միերի Դուռ, նախնական էսքիզ, 2017
Բազալտ, մետաղյա ձոպաններ

Դուռ, 2016, տեսքը Միլանի պետական համալսարանում

Օրագիր, 2016, Ֆրիզի քանդակների պուրակում

Տասներկու, 2015, Հայությունե տաղավար, Վենետիկի 54-րդ բիենալե

Ծնվել է 1976 թվականին, Երևանում:
Ապրում և աշխատում է Ֆլորենցիայում, Իտալիա:

Միերի Դուռը, 2017

Գործը ոգեշնչված է Փոքր Միերի՝ «Սասնա Ծռեր» էպոսի վերջին սերնդի հերոսի ողբերգական ու վախճանաբանական առասպելից: *Միերի Դուռը* քանդակ-ինստալացիա է՝ լեցուն ֆիզիկական և հոգեբանական լարվածությամբ, և պատրաստված է բազալտի կտորներից, որոնք իրենց ներսում տեքստ ունեն պարփակված: Գրությունները խոսում են մերօրյա աշխարհից, մարդկությունից, դրա արժանապատվությունից ու արժեքներից: Խոսում են Փոքր Միերից՝ համընդհանուր մարդուց, որը նստած է մեզնից յուրաքանչյուրի հոգու խորքում ու սպասում իր ազատագրմանը:

Միքայել Օհանջանյանի յուրաքանչյուր պլաստիկ նախագծում մենք գտնում ենք անարտահայտելին մարմնավորելու մի փորձ: Նրա քանդակներն ընդգրկում ու ակտիվացնում են հակադրությունները՝ հստակությունն ընդդեմ աղոտ ձևերի՝ թափանցիկ տարածության մեջ, ուր նյութը ստվերում է լույսն առանց եզրագծերի, ուր աներևույթն ի հայտ է տալիս իրական առարկաներում, որոնք երևակում են աներևույթ փոփոխությունները՝ այն իսկ պահին, երբ դրանք դառնում են ընկալելի:

Օհանջանյանը ծնվել է 1976 թվականին, Երևանում: Նրա ծնողները Սյունիքից են՝ Հայաստանի հարավի լեռնային շրջանից: Կրթությունը ստացել է Երևանի արվեստի ակադեմիայում: 2000 թվականին տեղափոխվել է Իտալիայի Ֆլորենցիա քաղաքը՝ ուսանելու Ֆլորենցիայի արվեստի ակադեմիայում: Մինչ օրս նա ապրում և աշխատում է այնտեղ: Ստեղծագործական կարիերայի ընթացքում մասնակցել է բազմաթիվ տեղական և միջազգային ցուցահանդեսների: 2017 թ. նրա *Օրագիր* քանդակը առաջիկա երեք տարիների համար ցուցադրության է տարվել Յորքշիրի քանդակների պուրակ (Մեծ Բրիտանիա), իսկ 2016-ին ցուցադրվել է Լոնդոնի Ֆրիզի քանդակների պուրակում:

Մյուս ցուցադրություններից են՝
2015. *Հայություն*, Հայաստանի ազգային տաղավար, «Ոսկե առյուծ» մրցանակ, Վենետիկի 56-րդ բիենալե: *Անրջային լանդշաֆտ*, Պեկինի 6-րդ Արվեստի միջազգային բիենալե, ՀՀ պետական տաղավար, Պեկինի Արվեստի պետական թանգարան, Պեկին, Չինաստան: *Բացահայտումներ*, Գեղեցիկ արհեստների և ստեղծագործությունների 2-րդ միջազգային բիենալե, Իտալական տաղավար, Շանզ Էլիզեի Մեծ պալատ, Փարիզ, Ֆրանսիա: *Թռռներ – Պատկանելության նոր աշխարհագրություն*, The DEPO, Ստամբուլ, Թուրքիա: 2014. *AtTrazioni*, LuzArt պատկերասրահ: *Հավասարակշռություն – Պլաստիկ մշակում*, InteriorDAsein, Բեռլին, Գերմանիա, 2012. *Dolomiti Contemporanee DC NEXT*, Fabbrica Ex Visibilia, Տաիբոն Ագորդինո, Իտալիա: *Իմ ներսուդուրսը*, Spazio Blue, Բոլոնիա, Իտալիա:

Վերջերս՝ 2014 թ., Օհանջանյանը պարգևատրվել է Henraux մրցանակով: Նրա գործերը կարելի է գտնել իտալական և միջազգային հավաքածուներում, այդ թվում՝ Վատիկանում, Henraux հիմնադրամում, Տարգետիի Թեթև արվեստի հավաքածուում, և Վայնշտրասեի Նոյշտադթ քաղաքի (Գերմանիա) հավաքածուում, ինչպես նաև աշխարհի բազմաթիվ անհատական հավաքածուներում:

ՄԱՐԻԱ ՑԱԳԱՐԻ

Ծնվել է 1981 թվականին Հունաստանի Պիրեա քաղաքում: Ապրում և աշխատում է Աթենքում (Հունաստան):

Նոր Կանաչը, Մաս երկրորդ/Սպասում
գործից, 2016, Հիդրա, Հունաստան

Նոր Կանաչը, Մաս երկրորդ/Սպասում, 2016

Մաս երկրորդ/Սպասում ինստալացիան հիմնված է գերմանացի փիլիսոփա և բանաստեղծ Նովալիսի «Հայնրիխ ֆոն Օֆթերդինգեն» անավարտ վեպի վրա: Դա պատմում է մի պատանու մասին, որն թողնում է ամեն ինչ և հեռանում փնտրելու փոքրիկ կապույտ ծաղիկը, որ մարմնավորում է իդեալական կյանքի ու մաքուր պոեզիայի ճշմարտությունն ու արժեքները: «Անալոգ լեռան» նման՝ սա ևս պոետիկ և ներքին փնտրտուք է և ծառայում է խթան՝ առաջնորդելով պարադոքսալ ուղևորությունների ու որոնումների և կամուրջներ կառուցելով երևակայության ու իրականության միջև:

Նոր կանաչը նախագիծը ժամանակակից առասպել է՝ հիմնված միջնադարյան ավելի հին առասպելի վրա, և պատմում է «Նոր կանաչը» կոչվող մտացածին մի ընկերության հիմնադրման մասին: «Նոր կանաչը» ներկայացնում է բնական լանդշաֆտին առնչվող համաշխարհային նոր միտում, որը Կապույտը հռչակում է իբրև Նոր Կանաչ՝ առաջարկելով փոխել կանաչը: Ընկերությունն աշխարհում առաջինն է հայտնաբերում բնածին կանաչը կապույտի վերածելու բանաձևը և հիմնում երևակայական պարտեզներ աշխարհով մեկ, ամենանշանավոր հուշարձանների և վայրերի մերձակայքում՝ բուսական հիմքով կապույտ պիգմենտը վերամշակելով և վերադարձնելով բնական միջավայր: Գերազանցապես առևտրային գովազդի միջոցով՝ ընկերությունը ձևավորում է համաշխարհային փոփոխության նոր միտում, որը սկսվում է բնական լանդշաֆտի վերափոխումից: Պաստառներով, գրքույկներով, փողոցային վահանակներով, սոցիալական ցանցերում զետեղված գովազդով և հանրային տարածքներում գործող կատարողների միջոցով՝ վերափոխման գաղափարը հասցվում է հանրությանը և ընկերությանը թույլ տալիս սերմանել ու տարածել փոփոխության նոր պահանջը: «Նոր կանաչը» նախաձեռնում է երկխոսություններ մարդկանց հետ՝ փորձելով բացել նրանց փոփոխությունների առջև, և խոստանում, որ «կապույտ լանդշաֆտի» ընդունումը կբերի նրանց ամենաանսպասելի իղձերի և երազանքների իրականացմանը:

2017. *AQUA*, *Արդի արվեստագետներն ու ջրի հիմնախնդիրները,* Պենթես դղյակ, Ժնև:
2016. *Քաղաքային մեքենա*, Բելգիական տրիենալե, Բելգիա: *Մաս երկրորդ/Սպասում*, HYam ասոցիացիա, Հիդրա կղզի, Հունաստան: *Հիշեք ներկան*, Le Lait-Center Ժամանակակից արվեստի կենտրոն, Ֆրանսիա: *Պատերազմի կուսակցություն*, Արքայական ռազմական թանգարան, Բրյուսել, Բելգիա: *Հարցական նշան*, HYam մրցանակ, Artcurial, Փարիզ, Ֆրանսիա:
2015. *Antallaxima*, Sin, Յորգադիսի առանձնատուն, Լեսվոս կղզի, Հունաստան:
2014. *Թարմ, հույն արվեստագետների նոր սերունդ*, Արդի արվեստի պետական թանգարան, Աթենք, Հունաստան:
2013. *Ամենուր բացի այժմվանից*, Ժամանակակից արվեստի 4-րդ բիենալե, Թեսալոնիկե, Հունաստան: *Կիսաֆաբրիկատ*, Գազիի Տեխնոպոլիս, Աթենք, Հունաստան:
2012. Անկախ արվեստագետների սալոն, Շանզ Էլիզեի Մեծ պալատ, Փարիզ, Ֆրանսիա:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. հուլիսի 21 - սեպտեմբերի 30

Բացումը՝ հուլիսի 22-ին, շաբաթ

12:00-17:00

Կատարումը՝ **Գոհար Սմոյան** (Հայաստան)

ԳՅՈՒՄՐԻ

Վիդեոնյութերի հեղինակներ՝

ԳՈՀԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Հայաստան) ԵՎ **ՄԱՐՏԱ ԴԵԼ ԱՆՋԵԼՈ** (Իտալիա) **ՌՈԶԱՆԱ ՓԱԼԱԶՅԱՆ** (Բրազիլիա)

Ֆիլմերի հեղինակներ՝
ՄՈՒՐԱԼԻ ՆԱԻՐ (Հնդկաստան)
ԻԴՐԻՍԱ ՈՒԵԴՐԱՈԳՈ (Բուրկինա Ֆասո)
ՋԱՖԱՐ ՓԱՆԱՀԻ (Իրան)
ՋԻԱ ՋԱՆԳ-ՔԵ (Չինաստան)

Համադրող՝ Ադելինա Ջուբերյան ֆոն Ֆյուրշթենբերգ

ՄԱՐԻԱՄ ԵՎ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՍԼԱՄԱԶՅԱՆՆԵՐԻ (Հայաստան)
գործերի ընտրանու հետ զուգադրություն

համադրողական համագործակցություն Վարդան Ղուկասյանի հետ

Վայրը՝

Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ

1987 թվականին հիմնադրված պատկերասրահը արվեստի թանգարան է, որում պահվում և ցուցադրվում են Ասլամազյան քույրերի գեղանկարչական, գրաֆիկան և խեցեգործական ստեղծագործությունները:
Սև տուֆից կառուցված շենքը վառ օրինակն է 19-րդ դարի ալեքսանդրապոլյան ճարտարապետության, որում միահյուսված են եվրոպական և հայկական ավանդական ճարտարապետության տարրերը: Շենքն ունի ուշագրավ ճարտարապետական առանձնահատկություններ՝ ընդարձակ ներքին բակ և փայտյա պատշգամբ: Գոյության 136 տարիների ընթացքում պատկերասրահի շենքը երկու անգամ ենթարկվել է ավերիչ երկրաշարժերի (1923, 1988), սակայն երկու անգամ էլ վերակառուցվել է և վերաբացվել:

ՌՈԶԱՆԱ ՓԱԼԱԶՅԱՆ

,… Պատմություն, որ երբեք չմոռացաtե,
2013/2015, Վիդեո ինստալացիա, 13 ր

Ծնվել է 1963 թվականին Ռիո դե Ժանեյրոյում (Բրազիլիա), որտեղ և ապրում ու աշխատում է:

«… Պատմություն, որ երբեք չմոռացա…», 2013/2015

«…Պատմություն, որ երբեք չմոռացա…» նախագիծը վիդեո ինստալացիա է, որում սիրողական տեխնիկայով նկարահանված տեսանյութը չի հավակնում հասնելու տեխնիկական գերազանցության, այլ փորձում է վերադասավորել և համակարգել 1915-1920 թթ. Հայոց ցեղասպանության հուշերի պատառիկները՝ հենվելով մանկությունից ի վեր լսած պատմությունների և դրվագների վրա: Մոռանալ դրանք՝ կնշանակի մոռանալ սեփական գոյությունը:

Պատումում կարմիր թելով անցնում է արվեստագետի տատի թաշկինակը, որը նա ասեղնագործել էր տակավին Թեսալոնիկեում փախստական եղած ժամանակ: Յուրաքանչյուր դրվագի հետ փոխվելով՝ օբյեկտը վերստին անցնում է իր ծագման ուղին՝ Կոնիայով, Հունաստանով, Ռիո դե Ժանեյրոյով հասնելով նոր կյանքի:

Ռոզանա Փալազյանը 1986 թ. ավարտել է Գամա Ֆիլյոյի համալսարանը՝ ստանալով ճարտարապետի և ուրբանիզմի մասնագետի դիպլոմ, իսկ 1988-92 թթ. մասնակցել Պարկ-Լաժի Վիզուալ արվեստների դպրոցի արվեստի դասընթացներին (երկուսն էլ Ռիո դե Ժանեյրոյում): Նրա աշխատանքները ներկայանում են իբրև մերձեցման ու երկխոսության մի գործընթաց հատկապես նրանց հետ, ովքեր վտարված կացության մեջ են և հրավիրված են մասնակցելու լսելու վրա հիմնված հարաբերություններին: Փոխանակումները վերածվում են ստեղծագործությունների, որոնք նրբորեն ուժգնացնում են այդ մարդկանց ձայնը՝ փորձելով հանրության մեջ զգայունություն ստեղծել այս հիմնախնդիրների շուրջ: Գործունեության 27 տարում Փալազյանն աշխատել է տարբեր միջոցների հետ (գծանկար, ասեղնագործություն, ինստալացիա, վիդեո, պերֆորմանս և հանրային արվեստի նախագծեր)՝ առաջ մղելու համար արվեստի, կյանքի և հասարակության մասին փորձառությունն ու ընկալումները:

«Linguagens do corpo carioca [a vertigem do Rio]» ցուցահանդես, Ռիոյի արվեստի թանգարան, Ռիո դե Ժանեյրո, Բրազիլիա (2016): Վենետիկի 56-րդ միջազգային բիենալե (2015): Թեսալոնիկեի 4-րդ բիենալե, Հունաստան (2013): *«Փողոցը»* ցուցահանդես, M HKA, Անտվերպեն, Բելգիա (2011): Անհատական ցուցահանդես «Կազա Ֆրանսա Բրազիլ»-ում, Ռիո դե Ժանեյրո, Բրազիլիա, (2010): *«Pretty Tough: Contemporary Storytelling»* ցուցահանդես, Ալդրիչի Ժամանակակից արվեստի թանգարան, Քոնեկտիկուտ, ԱՄՆ (2009): «Միջոցառումների ատլաս» ցուցահանդես, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ, Լիսաբոն, Պորտուգալիա (2007): Սան Պաուլուի 26-րդ միջազգային բիենալե, Բրազիլիա (2004):

ՄՈՒՐԱԼԻ ՆԱԻՐ

Ծնվել է 1966 թվականին, Հնդկաստանի Կերալա նահանգի Անանդապուրամ գյուղում: Ապրում և աշխատում է Հայդարաբադում (Հնդկաստան):

Հատում, 2008

Մայրուղու բերանին ընկած հնդկական մի գյուղում գյուղացի կինը, վերադառնալով արոտից, փորձում է իր նախրով հատել փողոցը և երբ խիտ երթևեկության մեջ վերջապես բացվածք է տեսնում ու սկսում անցնել, մեծ արագությամբ մոտեցող բեռնատարը նրան հարկադրում է քաշվել ետ՝ բաժանելով նախրից: Խուճապի մեջ հայտնված կինը կրկին քայլ է անում, բայց այս անգամ ընկնում է դպրոցական ավտոբուսի տակ: Վրաերթից հետո շարժումը դադարում է, կովերը դեսուդեն են ընկնում, իսկ ջղայնացած գյուղացիները սկսում են ի նշան բողոքի ջարդուփշուր ամեն ինչ: Տեղում հայտնվում է մուգ ակնոցներով և էլեկտրոնային սարքերով մի մարդ: Կնոջ մարմինը՝ ստվարաթղթի կտորի նման տափակած, մտցնում են շտապօգնության մեքենան: Արդիական լաբորատորիայում մասնագետներն աշխատում են նրա մարմնի վրա, որի նմանությամբ պատրաստում են մի տիկնիկ: Հետագայում, ենթադրաբար խանութում արդեն, կենդանանում է պարող կովի մի կարիկատուրա՝ այդ կնոջ ժպտացող գլխով: Էկրանին երևում է ակնոցավոր մարդու դեմքի լայն ժպիտը:

Նաիրը, լինելով երկրաբան, որոշում է Մումբայում ռեժիսուրա սովորել: Նրա առաջին կարճամետրաժ ֆիլմը՝ *Հնդիկ գյուղացու ողբերգությունը*, արժանանում է Հնդկական լավագույն կարճամետրաժ ֆիլմի համար մրցանակի: Նրա լիամետրաժ ֆիլմերը՝ *Մահվան գահը*, *Շան օրը* և *Վերջից սկսվող պատմությունը* ցուցադրվել են Կաննի փառատոնում: Դրանք բոլոր վերաբերում են Հնդկաստանի գյուղական շրջանների սոցիալական կառուցվածքին և անարդարություններին: Կնոջ՝ Պրիյայի հետ միասին, նա ղեկավարում է Լոնդոնում իր հիմնած «Elephant Films» կինոարտադրությունը, ինչպես նաև դրա՝ Հնդկաստանի Հայդարաբադ քաղաքի «Maya Films» մասնաճյուղը:

2007 թվականին Մուրալի Նաիրը Վենետիկի 64-րդ կինոփառատոնի շրջանակներում պարգևատրվել է Վենետիկ քաղաքի մրցանակով: 2008 թվականին մասնակցել է «Արվեստ՝ հանուն աշխարհի» կազմակերպության կողմից մարդու իրավունքներին առնչվող ֆիլմերի նկարահանումներին:

Հատում, 2008
Հնդկաստան, 35մմ, գունավոր, 3 րոպե:
Դրվագ Մարդու իրավունքների մասին կինոշարքից: ,Արվեստ՝ հանուն աշխարհիե արտադրություն, Ժնև

ԻԴՐԻՍԱ ՈՒԵԴՐԱՈԳՈ

Ծնվել է 1954 թվականին Բուրկինա Ֆասոյի Բանֆորա բնակավայրում: Ապրում և աշխատում է Ուագադուգուում (Բուրկինա Ֆասո):



Մանգոն, 2008
Բուրկինա Ֆասո, HD, գունավոր, 3 րոպե, 6 վրկ:
Դրվագ Մարդու իրավունքների մասին կինոշարքից: «Արվեստ՝ հանուն աշխարհի» արտադրություն, Ժնև

Մանգոն, 2008

Կորոն՝ 6-ամյա մի աղջնակ, մանգոյի կորիզը վերցնելով ու ձեռքում պահելով, թաղում է գյուղամիջի հրապարակում՝ անտեսելով իր վրա ծիծաղող ընկերներին: Նա ջրում է աճող բույսը, և փորձում պաշտպանել, իսկ մարդիկ շարունակ անցնում են կողքով: Օր օրի ետևից աղջնակը խնամում է իր բույսը, որը նրա պես աճում է ու աճում: Երբ Կորոն՝ արդեն կին, սիրահարվում է ու երեխա ունենում, հասած մանգոները թափվում են ծառից: Ֆիլմն ավարտվում է Կորոյի մանուկ աղջնակի պատկերով, որը հավաքում է մանգոյի կորիզներն ու տնկում գյուղում:

Իդրիսա Ուեդրաոգոն Բուրկինա Ֆասոյում ապրող ռեժիսոր է և նկարահանում է աֆրիկյան թեմաներով ֆիլմեր գյուղի և քաղաքի, ավանդականի և նորի միջև կոնֆլիկտի մասին: 1986 թվականին Իդրիսան նկարահանել է իր առաջին՝ *Ընտրություն* լիամետրաժ ֆիլմը: 1988 թվականին թողարկվել է նրա մյուս՝ *Յաաբա* ֆիլմը, որը 1989 թվականին արժանացել է Կաննի կինոփառատոնի «Կինոքննադատների մրցանակի» և FESPACO-ի «Հանդիսատեսի մրցանակի» (Բուրկինա Ֆասո): 1990 թվականին նա նկարահանել է *Տիլայի* ֆիլմը, որը հունական ողբերգությունը փոխադրում է ժամանակակից աֆրիկյան միջավայր, որի համար արժանացել է 1990 թ, Կաննի կինոփառատոնի «Գրան պրի» մրցանակին: Նույն տարում Ուագադուգուի FESPACO կինոփառատոնին ֆիլմը արժանացել է Étalon de Yennenga գլխավոր մրցանակին: Նրա *Սրտի ձիչը* (1994) ֆիլմը հաջորդ տարի՝ Միլանի 5-րդ աֆրիկյան կինոփառատոնին շահել է «Հանդիսատեսի մրցանակ»: 1998 թ., 8-րդ փառատոնի ընթացքում, *Կինի և Ադամս* ֆիլմի համար (1997) արժանացել է «Լավագույն լիամետրաժ ֆիլմ» մրցանակի: 2003 թ. նկարահանել է *Աստվածների ցասումը*, իսկ 2006 թ.՝ *Կատո Կատո* ֆիլմերը: Իդրիսա Ուեդրաոգոն Բուրկինա Ֆասոյի «Աշխատանքային վաստակի» պետական շքանշանի ասպետ է, ինչպես նաև Ֆրանսիայի «Արվեստի և գրականության» շքանշանի ասպետ:

2008 թվականին մասնակցել է «Արվեստ՝ հանուն աշխարհի» կազմակերպության կողմից մարդու իրավունքներին առնչվող ֆիլմերի նկարահանումներին:

ՋԱՖԱՐ ՓԱՆԱՀԻ

Ակորդեոնը, 2010
Իրան, գունավոր, 8 ր 25 վրկ,
Լեզուն՝ պարսկերեն (անգլերեն ենթագրերով)
«Այնժամ և այժմ. Սահմաններից և տարբերություններից այն կողմ» նախագծի մաս,
«Արվեստ՝ հանուն աշխարհի» արտադրություն,
Ժնև

Ծնվել է 1960 թվականին, Միանեում (Իրան): Ապրում և աշխատում է Թեհրանում (Իրան):

Ակորդեոնը, 2010

Երկու երեխա՝ քույր ու եղբայր, իրենց գոյությունը պահպանում են Թեհրանի փողոցներում ակորդեոն նվագելով, իսկ անցորդները մեծահոգաբար դրամ են տալիս նրանց: Մի օր մեկն ուժով խլում է նրանց գործիքը՝ մեղադրելով, որ նվագում են մզկիթի դռանը: Տղան ներողություն է խնդրում՝ ասելով, որ չէր գիտակցում, թե մզկիթի մոտ է: Երեխաները հուսահատ սկսում են բղավել, քանի որ փողը նրանց անհրաժեշտ է տանը մնացած հիվանդ մորը դեղ առնելու համար: Բայց մարդն անդրդվելի է մնում և ակորդեոնի հետ միասին անհետանում է քաղաքի նրբանցքների լաբիրինթոսում:

Քիչ անց, երեխաները նկատում են նրան՝ հրապարակում նստած ակորդեոն նվագելիս: Տղան վերցնում է քարն ու նշան բռնում: Աղջիկը խնդրում է եղբորը չանել դա: Երբ երեխաները մոտենում են մարդուն, նա շարունակում է նվագել և ի վերջո վերադարձնում է գործիքն առանց որևէ պայքարի:

Իրանցի ռեժիսոր, սցենարիստ և կինոխմբագիր Ջաֆար Փանահին հայտնի է իբրև Իրանի ամենաազդեցիկ կինոգործիչներից մեկը: Թեև նրա ֆիլմերը հաճախ արգելվում են իր հայրենի երկրում, նա շարունակում է վայելել միջազգային կինոքննադատների և կինոյի տեսաբանների լայն ճանաչումը՝ արժանանալով բազմաթիվ մրցանակների: Նրա ֆիլմերը հայտնի են Իրանի կյանքի նկատմամբ հումանիստական բովանդակությամբ՝ հաճախ կենտրոնանալով երեխաների կրած դժվարությունների վրա:

ՋԻԱ ՋԱՆԳ-ՔԵ

Ծնվել է 1970 թվականին Չինաստանի Շանշյի նահանգի Ֆենգյանգ քաղաքում: Ապրում և աշխատում է Պեկինում (Չինաստան):

Սև նախաճաշ, 2008
Չինաստան, HD, գունավոր, 3 րոպե:
Դրվագ Մարդու իրավունքների մասին կինոշարքից: «Արվեստ՝ հանուն աշխարհի» արտադրություն, Ժնև

Սև նախաճաշ, 2008

Զբոսավարի ուղեկցությամբ և տեսախցիկը ձեռքին, զբոսաշրջիկը ժամանում է գավառական մի ավան, որտեղ հույս ունի տեսնելու մշակութային ու պատմական բազմաթիվ տեսարժան վայրեր: Այնինչ, բոլոր սպասումներին հակառակ, նա իրեն հայտնաբերում է քաղաքային արդյունաբերական միջավայրում, որում նույնիսկ փողոցային նշաններն են քայքայված ծխի և օդի աղտոտվածությունից: Զբոսաշրջիկն ինքնաբերաբար սկսում է լուսանկարել քաղաքի կանգառների, փողոցների և ճանապարհների նշանները: Ավելի ուշ՝ քաղաքը լքելուց հետո, նա սպասում է ավտոբուսին ու տեսնում մայրուղով ընթացող երկար բեռնատարները, որոնք ածուխ են ներկրում քաղաք: Դրանց ետևից պատկերավոր կերպով երկինքն է բարձրանում փոշու և մրի թանձր ամպ: Երբ դա ցրվում է, նա նկատում է, թե բանվորներն ինչպես են նախաճաշում ածխի փոշու մեջ: նրանց դեմքերն ածխի գույն ունեն և գրեթե անճանաչելի են, իսկ նրանց կողքին փոշու մեջ նստած, նա, տեղացիների նման սև դեմքով, ինքը ևս վայելում է սև այդ նախաճաշը:

Ջիա Ջանգ-Քեն համարվում է չին ռեժիսորների «Վեցերորդ սերնդի» առաջատարներից մեկը: Նրա ֆիլմերը վերաբերում են օտարված երիտասարդության թեմաներին, Չինաստանի արդի պատմությանն ու գլոբալիզացիային, առանձնանում երկար կադրերով, գունավոր թվային նկարահանումներով և մինիմալիստական/ռեալիստական ոճով: Ջիան առաջին անգամ Չինաստանի կինոասպարեզում հայտնվել է 1990-ականների վերջին և 2000-ականների սկզբին՝ լիամետրաժ անկախ ֆիլմերով: Դրանց թվին են պատկանում *Կառամատույց* և *Անհայտ հաճույքներ* ֆիլմերը, որոնք, չնայած աշխարհում սակավ ցուցադրված լինելուն և Չինաստանում ընդհատակյա գոյությանը, միջազգային մեծ ճանաչում են վայելում: 2004 թ. նրա *Աշխարհը* ֆիլմը, որն առաջին ֆիլմն է՝ նկարահանված չինական կառավարության թույլտվությամբ, արժանացել է Վենետիկի կինոփառատոնի «Ոսկե առյուծ» մրցանակին: 2006 թ. նրա *Նատյուրմորտ* ֆիլմը ևս արժանանում է «Ոսկե առյուծ» մրցանակի: 2008 թ. մասնակցել է «Արվեստ՝ հանուն աշխարհի» կազմակերպության կողմից մարդու իրավունքներին առնչվող ֆիլմերի նկարահանումներին:

ՄԱՐԻԱՄ ԵՎ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՍԼԱՄԱԶՅԱՆՆԵՐ

Մարիամ Ասլամազյան, Պղպեղներ. կրակ

Մարիամ և Երանուհի Ասլամազյանները նկարչուհի քույրեր էին, որոնք՝ ճամփորդելով 1930-50-ական թվականներին, ստեղծագործել են Աֆրիկայում, Հնդկաստանում, Չինաստանում և Ամերիկայում: Ստեղծագործական իմաստով ազդվել են այնպիսի նկարիչներից, որպիսին Աբրահամ Արխիպովն է, և նկարիչներից, որոնց հանդիպել են իրենց շրջագայությունների ընթացքում (ինչպիսին էր Ամրիտա Շեր-Գիլը Հնդկաստանում):

Մարիամ Ասլամազյանը ծնվել է 1907 թվականին, Կարսի մարզի Բաշ-Շիրակ գյուղում, և վախճանվել 2006 թվականին:

Մարիամի գործերը հագեցած են լույսով ու պայծառությամբ, իսկ դրանց գույների բովանդակությունն ու կատարումը խոսում են աշխարհի էության փնտրտուքից: Իր արվեստում նա փորձել է սեփական տեսանկյունից վերաքննել խորհրդային և հետպատերազմյան տարիները և իր վերաբերմունքն է արտահայտել այդ տարիների հետևանքների մասին:

Նրա գործերը մշտապես ցուցադրվում են աշխարհի բազմաթիվ թանգարաններում՝ Սոֆիայում, Բեռլինում, Սանկտ-Պետերբուրգում, Վենետիկում, Տոկիոյում, Դելիում և այլն: Հնդկաստանին նվիրված նրա աշխատանքների շարքը 1970-71 թթ. պարգևատրվել է Ջ.Ներուի անվան մրցանակով: 1976 թ. Նրան շնորհվել է նաև Գամալ Աբդել Նասերի անվան մրցանակ:

Երանուհի Ասլամազյան, Աֆրիկյան նատյուրմորտ՝ արձանիկներով

Երանուհի Ասլամազյանը ծնվել է 1910 թվականին, Կարսի մարզի Բաշ-Շիրակ գյուղում, և վախճանվել 1988 թվականին:

Երանուհի Ասլամազյանն իր արվեստով մեծ ուշադրություն է դարձրել մարդու հուզական վիճակին՝ միահյուսելով դա իր գործերին: Նկարչուհու մոտիվներն ասես շարունակ կրկնվելիս լինեն, բայց ամեն անգամ նա վերհանում է նոր ստեղծագործական խնդիրներ ու թեմաներ, որոնք առաջարկում են նորովի լուծումներ, որոնց նպատակն է թույլ չտալ, որպեսզի հանդիսատեսը ցատկի եզրահանգումների, այլ շարունակի մտածել:

Նրա գործերը մշտապես ցուցադրվում են աշխարհի բազմաթիվ թանգարաններում՝ Լոնդոնում, Սոֆիայում, Բեռլինում, Սանկտ-Պետերբուրգում, Վենետիկում, Տոկիոյում, Դելիում և այլն:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ.
Սեպտեմբերի 14 - Դեկտեմբերի 31

Բացումները՝
սեպտեմբերի 12, 13, 14-ին

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ.
Սեպտեմբերի 14 – Դեկտեմբերի 31

Բացումները՝
սեպտեմբերի 12, 13, 14-ին

ԷՐԵԲՈՒՆԻ (Երևան)

ՖԵԼԻՉԵ ՎԱՐԻՆԻ (Շվեյցարիա),
տեղայնացված ինստալացիա

Կազմակերպիչ՝ **Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատուն**

Վայրը՝

Երևանի երկաթուղային կայարան, Էրեբունի համայնք

1902 թվականին Երևանում կառուցվում է առաջին երկաթուղային կայարանը, որը քաղաքը միացնում է Ալեքսանդրապոլի (Գյումրի) և Թիֆլիսի (Թբիլիսի) հետ: Կայարանի ներկայիս շենքը կառուցվել է 1956 թվականին և խորհրդային երկնաքերների՝ Մոսկվայի պետական համալսարանի և Վարշավայի մշակույթի պալատի նոր-դասական և ավելի փոքրամասշտաբ պատճենն է, ունի երկար սայրաձող, որը ծառայում է իբրև համաչափության առանցք, կրում է խորհրդային ինգաթև աստղը և Մարտիրոս Սարյանի հեղինակած զինանշանը՝ Արարատը հասկերի ու խաղողի ողկույզների վրա:

Երկաթուղային կայարանին կից է Սասունցի Դավիթ հրապարակը, որի կենտրոնում տեղադրված է հայկական էպոսի հերոս Սասունցի Դավթի արձանը: Կայարանը գտնվում է քաղաքի տասներկու համայնքներից Էրեբունիում, որը կրում է ուրարտական բերդի անվանումը:

ՖԵԼԻՉԵ ՎԱՐԻՆԻ

Ծնվել է 1952 թվականին Շվեյցարիայի Լոկարնո քաղաքում: Ապրում և աշխատում է Փարիզում (Ֆրանսիա):

Շրջանաձև աղեղները տրամագծի վրա, «Լա Վիլետ» զբոսայգի, Փարիզ, 2015

Կրկնակի սկավառակը՝ տանիքներով ծածկված, Սալոն դը Պրովանս, Մարսել, 2013

Ութ քառակուսի, Վերսալի պալատի պարտեզ, Վերսալ, 2006

Ֆելիս Վարինին մշակում է *տեղում* ստեղծագործելու արվեստը: Իբրև արվեստագետ՝ նա աշխատում է լանդշաֆտի կամ ճարտարապետության անմիջական ֆիզիկական տրվածքի հետ: 1970-ականներից՝ գործունեության ամենասկզբից ի վեր նա թոթափել է նկարչության ձևաչափը՝ գերադասելով զարգացնել տարածական արվեստի սեփական ուղղությունը: Տարօրինակորեն՝ նա շարունակում է ստեղծել գործեր, որոնց երբ դիտում ես խիստ որոշակի տեսանկյունից, տարածության մեջ նկարված պատառիկները աչքի առջև ձևավորում են իդեալական երկրաչափություն և դառնում նկարի պես բացարձակ երկչափ: Դիտակետից շեղվելիս նկարված ֆիգուրը կազմաքանդվում է՝ տեղ տալով տարածության ծավալներին:

Վարինիի մոդեռնիստական գլուխգործոցները ցրված են աշխարհով մեկ՝ շենքերում և շենքերի վրա՝ Լոնդոնի Քինգզ Քրոս երկաթուղային կայարանից մինչև փարիզյան տաճարների սրբազան պատերը: Ինչևէ, նրա տեսարժան գործերը նրանք են, որոնցում արվեստագետը ընդունել է մեծ մասշտաբների հետ աշխատելու մարտահրավերը՝ պատկերները մակադրելով ամբողջական գյուղերի և քաղաքային տարածքների վրա:

Վարինին մասնակցել է մի քանի խմբային և անհատական ցուցահանդեսների, իսկ նրա աշխատանքները ներկայացվել են ամբողջ աշխարհով մեկ՝ Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի, ԱՄՆ-ի տարբեր հանրային տարածքներում:

Անհատական ցուցահանդեսների ընտրանին ներառում է՝

2016. *Բացօթյա*, MAMO, Cité Radieuse, Unité d'habitation Le Corbusier, Մարսել, Ֆրանսիա: *Տասնհինգ դիտակետ*, Լուսանկարչական ցուցահանդես և գիտաժողով, «ՀայԱրտ» մշակութային կենտրոն, Երևան, Հայաստան:
2015. *«Լա վիլետը» շարքերով,* Pavillon Paul-Delouvrier և Galerie Est de la grand Halle, Փարիզ:
2013. *Ֆելիչե Վարինի / Ինը պարող աղեղ*, Պատկերասրահ, Ումեա, Շվեդիա: *Շենքերով մեկ*, Canalside Steps, Granary Square, King's Cross, Լոնդոն:
2008. *Ֆելիչե Վարինի*, Demisch Danant, Նյու-Յորք:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ.
Սեպտեմբերի 14 – Դեկտեմբերի 31

Բացումները՝
սեպտեմբերի 12, 13, 14-ին

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ

Դեժա-վու ՍՏԱՆԴԱՐՏ

Արվեստագետներ՝
ՋԵՐԱՐԴ ԲԲՐՆ (Իռլանդիա)
ՅՈՋԵՖ ԴԱԲԵՐՆԻԳ (Ավստրիա)
ԻԳՈՐ ԳՐՈՒԲԻՉ (Խորվաթիա)
ՄԱՐԿՈՒՍ ՇԵՐԵՐ (Ավստրիա)

Ճարտարապետական նախագծեր՝
ԼԵՎՈՆ ՉԵՐՔԵԶՅԱՆ (Հայաստան)
ԳԵՎՈՐԳ ՔՈՉԱՐ (Հայաստան)
ՄԻՔԱՅԵԼ ՄԱԶՄԱՆՅԱՆ (Հայաստան)

Համադրող՝ Ռուբեն Արևշատյան

Վայրը՝

Գրողների ստեղծագործական տուն

Երևանից կարճ հեռավորության վրա՝ Հայաստանի մարգարիտը համարվող Սևանա լճի ափին կառուցված է խորհրդային մոդեռնիզմի վառ օրինակներից մեկը՝ Հայաստանի գրողների ստեղծագործական տունը: Այն ընկած է նախկինում կղզի, սակայն մակարդակի արհեստականորեն իջեցման պատճառով թերակղզու վերածված ցամաքալեզվակի հարավային հատվածում:
Ստեղծագործական տան ճարտարապետական ոճը խորհրդային մոդեռնիզմի այն փուլի արգասիքն է, որին բնորոշ էին հնարամտությունն ու վառ երևակայությունը:

Գրողների ստեղծագործական տունը երկու շինությունից բաղկացած համալիր է, որոնցից մեկը կառուցվել է 1930-ականներին՝ խորհրդային ականավոր ավանգարդիստ-ճարտարապետներ Միքայել Մազմանյանի և Գևորգ Քոչարի կողմից: Նրանք երկուսն էլ համարում էին, որ տեղական ճարտարապետաշինարարական ավանդույթներում առկա սիտուացիոն և օրգանական առանձնահատկությունների վրա հիմնված և դրանցից բխող ճարտարապետությունն ունակ է ձևավորելու սոցիալական նոր ձևեր: Ստալինյան բռնաճնշումների տարիներին Քոչարը և Մազմանյանը աքսորվել են Սիբիր: 1963 թվականին, Հայաստան վերադառնալուց հետո, Գևորգ Քոչարին հանձնարարվել է ավարտին հասցնել Գրողների ստեղծագործական տան ճարտարապետական համալիրի սառեցված նախագիծը: 1965 թվականին ավարտվել է ճաշարանի նոր շենքի կառուցումը:
Դեպի Սևանա լիճը լեզվակի պես ցցված ճաշարանից բացվում է լճին նայող անչափ գրավիչ տեսարան: Թեև շենքը հարուստ չէ արտաքին դեկորացիաներով, դրա զարդանախշերը հիշեցնում են ձկան թեփուկներ, որոնք լիճը սուզվելով կարող են անմիջապես կենդանանալ: Տեղանքի և ուրույն ճարտարապետության շնորհիվ՝ շենքի և շրջակայքի մեջ կարելի է գտնել ինքնատիպ գեղեցկություն և ոգեշնչվել ստեղծագործական աշխատանքով: Սևանի ստեղծագործական տունն առայսօր պահպանում է իր նախնական գործառույթը և հյուրընկալում ներշնչանք ու հանգիստ փնտրող արվեստագետների:

ՋԵՐԱՐԴ ԲԸՐՆ

Ծնվել է 1969 թվականին, Դուբլինում, որտեղ և ապրում ու աշխատում է:



Jielemeguvvie guvvie sjisjnjeli (Կինոնկար նկարի մեջ), 2015-2016
Միաղբյուր ֆիլմ, հետին պրոյեկցիա, 17 ր, կադր

1984 և անդր, 2005
Եռէկրան վիդեո-ինստալացիա, կադր



Սեռական ներ կենսակերպ, 2002
Եռալիք վիդեո՝ էկրանի վրա

Ջերարդ Բըրնը լուսանկարչական, պերֆորմանսային և վիդեո արվեստի վարպետ է: Նրա մուլտիմեդիա ինստալացիաները պրոֆեսիոնալ դերասանների և թատերական հնարքների միջոցով վերախաղարկում են պատմական դեպքերը՝ իբրև սկզբնաղբյուր ունենալով քսաներորդ դարի գրականությունն ու զանգվածային լրատվության աղբյուրները: Բըրնի դրամատիկ վերախաղարկություններից են Անդրե Բրետոնի հետ զրույցը, որը տպագրվել է «Սյուրռեալիստական հեղափոխություն» պարբերականում, 1929 թվականին (*Տղամարդն ու կինը սիրով են զբաղվում*), 1964 ռադիոզրույցը մինիմալիզմի մասին (*Իրը անցք է այն իրում, որն ինքը չէ*, 2010) և 1980 Քրայսլերի գովազդը՝ Ֆրանկ Սինատրայի մասնակցությամբ (*Ինչու է կրկին եկել կայսերականի ժամանակը,* 2002): *Սեռական նոր կենսակերպ* (2003) ու *1984 և անդր* (2005-07) գործերում 60-70-ականների փլեյբոյյան հարցազրույցների տեքստերը դառնում են տվյալ ժամանակին ներհատուկ կոստյումներով և միջավայրում վերախաղարկվող սցենարներ, ուր դրամատիզացիայի միջոցով ի ցույց է դրվում համատեքստի վճռորոշ կարևորությունը՝ մեր ուշադրությունը բևեռելով հասարակական վարքի տեղաշարժերի վրա:

2016. Mead պատկերասրահ, Վորվիքի արվեստի կենտրոն, Մեծ Բրիտանիա:
2015. Գրացի թանգարան, Ավստրիա: Սանկտ Գալենի արվեստի թանգարան, Շվեյցարիա: Բալթիմորի արվեստի թանգարան, Մերիլենդ:
2013. Վայթչափելի թանգարան, Լոնդոն:
2012. dOCUMENTA 13, Քասսել, Գերմանիա: Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ, Լիսաբոն, Պորտուգալիա:
2011. Վենետիկի 54-րդ բիենալե: IMMA, Դուբլին: Միլթոն Քեյնզի թանգարան: Ռենեսանս ընկերություն, Չիկագո:
2010. Lismore Castle Arts, Իռլանդիա: The Common Guild, Գլազգո:
2008. ICA Բոստոն: Արվեստի պետական թանգարան, Կոպենհագեն, Դանիա:
2007. Ներկայացրել է Իռլանդիան Վենետիկի 52-րդ բիենալեին: Դյուսելդորֆի արվեստի թանգարան:
2006: Ժամանակակից արվեստի կենտրոն, Վիլնյուս, Լիտվա:
2004. MUMOK, Վիեննա: BAK:

ՅՈԶԵՖ ԴԱԲԵՐՆԻԳ

Ծնվել է 1956 թվականին Քյոչախ-Մաութենում (Կարինթիա, Ավստրիա)։ Ապրում և աշխատում է Վիեննայում (Ավստրիա)։

Ստաբատ Մատեր, 2016, 35 մմ, սև-սպիտակ, 16 րոպե։

Հիպերկրիզիս, 2011, 35մմ, գունավոր, 17 րոպե։

Թիմաու, 1998, 16մմ, սև-սպիտակ, 20 րոպե։

Յոզեֆ Դաբերնիգը հայտնի է սոցիալական համակարգերի, Արևելյան Եվրոպայի (պատի փլուզումից հետո), բրուտալիստական ճարտարապետության, կոնցեպտուալ ասկետիզմի ուսումնասիրություններով և չոր հումորով։ Զբաղվում է ֆիլմերի, տեքստերի, առարկաների ստեղծմամբ, տարածության հետ կապված կոնցեպտներով և լուսանկարչությամբ։ Իր ֆիլմերում մանրամասն ծրագրված նյութին արվեստագետի ցուցաբերած մոտեցումը հաճախ հանգեցնում է աբսուրդային պահերի, որոնք բխում են յուրահատուկ տեղանքներից ու իրավիճակներից և դրանցում ներգրավված ոչ-պրոֆեսիոնալ դերասաններից։

Դաբերնիգի ֆիլմերը հաճախ առնչվում են անմիջական սոցիալիստական անցյալին, որում գերակշռում են մոդեռնի պահերը, սակայն որոշակիորեն ֆորդիստական ձևով։ Միայնությունն ու հոգնությունը հաճախ հանդիպող մոտիվներ են, որոնք սրում են դիտողի ուշադրությունը մանրամասների և ճարտարապետական միջավայրի ուրվագծերի նկատմամբ։

2017. Բադենի արվեստի թանգարան, Քարլզռուհե, Գերմանիա։
2016. Վինթերհուրի արվեստի թանգարան, Վինթերհուր, Շվեյցարիա։
2015. Վիլֆրիդ Լենց պատկերասրահ, Ռոտերդամ։
2014. Անդրեաս Հուբեր պատկերասրահ, Վիեննա։ «Շարժիր դատարկությունը», Mumok Ժամանակակից արվեստի թանգարան, Վիեննա։ Նրա աշխատանքները ցուցադրվել են «Մանիֆեստա» բիենալեին (Սանկտ-Պետերբուրգ, 2014, և Լյուբլյանա, 2000)։
2012. Գուանգջուի բիենալե։
2001 և **2003**. Վենետիկի բիենալե։

ԻԳՈՐ ԳՐՈՒԲԻՉ

Ծնվել է 1969 թվականին, Զագրեբում (Խորվաթիա), որտեղ և ապրում ու աշխատում է:

Մոնումենտ, 2015

1990-ականներին Խորվաթիան ականատես եղավ իր հակաֆաշիստական հուշարձանների նպատակադրված պղծմանն ու կործանմանը: աբստրակտ քանդակի ազդեցիկ այս գործերի նկարները զուգադրելով շրջակա բնության պատկերների հետ՝ *Մոնումենտը* ձևավորում է վիզուալ այլաբանություն, որն անդրադառնում է դրանց արդի նշանակության ու իմաստին:

Իգոր Գրուբիչի համար արվեստը բարոյական և քաղաքական ակտիվիզմի մի ձև է, և նրա աշխատանքներից ու կատարած քայլերից շատերը ստեղծվել են հանրային տարածքներում: 1990-ական թվականներից ի վեր արվեստագետը գործել է որպես մուլտիմեդիա նկարիչ: Նրա հեղինակությամբ ստեղծվել են հանրային տարածքներում տեղանքին հատուկ նորարարություններ, լուսանկարչական և վիդեո գործեր: 2000 թվականին սկսել է աշխատել որպես պրոդյուսեր և վավերագրական ֆիլմերի, հեռուստատեսային ռեպորտաժների ու սոցիալական գովազդների հեղինակ:

Նրա աշխատանքները ցուցադրվել են PS1 Ժամանակակից արվեստի թանգարանում (MoMA), Գուանգջուի բիենալեի 20-ամյակի հատուկ նախագծի ժամանակ, Փարիզի Տոկիոյի պալատում, Գենքի «Մանիֆեստա-9»-ում, Դրեզդենի «Մոտորենհալլե»-ում, Բեռլինի Վիզուալ արվեստների նոր միությունում, Վիեննայի Ժամանակակից արվեստի թանգարանում, Ստամբուլի 11-րդ բիենալեում, և Ֆրանկֆուրտի «Մանիֆեստա-4»-ում:
Նրա աշխատանքները ներառված են հետևյալ մի քանի հանրային հավաքածուներում՝ «Թեյթ Մոդեռն» թանգարան, Լոնդոն: Kadist Art Foundation, Փարիզ: ART Collection Deutsche Telekom ACT, Բեռլին: Kontakt The Art Collection of Erste Group, Վիեննա: Ժամանակակից արվեստի թանգարան, Բելգրադ: Ժամանակակից արվեստի թանգարան, Զագրեբ: Ժամանակակից և մոդեռն արվեստի թանգարան, Ռիեկա: Պատկերասրահ, Սպլիտ: Արվեստի թանգարան, Լոձ.

Մոնումենտ, 2015, գունավոր, 50 ր

2017. *Ուրախությամբ մոռանաք*, Դքսերի պալատ, Մասսա Կառառա: HT award for Croatian contemporary art, MSU, Զագրեբ: 2016. *Բանաստեղծական արտոնագիր*, Գրիֆիթի համալսարանի պատկերասրահ, Բրիսբեյն, Ավստրալիա: *Մոնումենտալիզմ*, Կուդոս պատկերասրահ, Քենսինգթոն, Մեծ Բրիտանիա: *(Un)Geduldiges Papier - Kunstaktivistische Poster, Sticker, Stencils, Cut outs...*, «Մոտորենհալլե», Դրեզդեն, Գերմանիա: *Q.I. VEDO_Igor Gubric Monument (դիտում),* Quartiere Intelligente, Նեապոլ, Իտալիա: *Կեղտոտ դեմքերով հրեշտակներ*, Մոդեռն պատկերասրահ, Լազարևաց, Սերբիա: *Իրականությունը՝ շրջանակում*, Օսիեկի քաղաքային պատկերասրահ, Խորվաթիա:

ՄԱՐԿՈՒՍ ՇԵՐԵՐ

Ծնվել է 1963 թվականին, Շվարցախում (Ավստրիա): Ապրում և աշխատում է Վիեննայում:

Մարկուս Շերերի ստեղծագործությունները կիրառում են միջոցների մեծ ներկապնակ, որոնցից են մեդիասենյակի ինստալացիաները, ֆիլմերն ու տեսանյութերը: Նա նաև համադրող է և աշխատել է Յոզեֆ Դաբերնիգի, Նորբերտ Ֆաշինգի և Քրիստոֆ Հերնդլերի հետ: Նրա աշխատանքները ցուցադրվել են աշխարհով մեկ՝ պատկերասրահներում և կինոփառատոններում:

2013. *Օ.Տ.*: 2011. *Սուբյեկտ/Օբյեկտ*:
2010. *Ենթակառուցվածք*: 2006. *Միջանկյալ տարածություն*, 50 որպե: 2003. *Աշխարհի առաջնության ասպարեզ*: 2001. *Արվեստի շոու*: 1999. *PROs – ընդունելություն*: 1998. *Թիմաու*:

Օ.Տ., 2013, գունավոր, 4 ր

Ենթակառուցվածք, 2010, Initiative Architektur ստուդիա, կադր

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

Նկար 1 Գևորգ Քոչարը (աջից) Վխուտեմասի ուսանողների խմբի հետ (ձախից՝ Գեորգի Կրուտիկով, աջից և վերևից՝ Կարո Հալաբյան) հավաքված են «Կեցցե՛ Հոկտեմբերը ճարտարապետության մեջ» պաստառի շուրջը: 1920-ականներ, *(Արծվին Գրիգորյանի արխիվից)*

Նկար 2 Միքայել Մազմանյանը (ձախից) և Գևորգ Քոչարը (աջից) Ակրոպոլիսում, 1935 (Միքայել Մազմանյանի արխիվից)





Սևանի հանգստյան տան համալիրի պատմությունը սկսվում է 1932 թվականին: Այն նախագծել են ճարտարապետներ Գևորգ Քոչարը և Միքայել Մազմանյանը, որոնք վաղ խորհրդային ավանգարդի ամենավառ ներկայացուցիչներից էին հայկական ճարտարապետության մեջ: Երկուսն էլ եղել են Մոսկվայի Վխուտեմինի (նախկինում՝ Վխուտեմաս) շրջանավարտներ, հիմնադրել են ВОПРА (Համառուսաստանյան պրոլետարական ճարտարապետների ասոցիացիա) և ОПРА (Հայաստանի պրոլետարական ճարտարապետների ասոցիացիա) կազմակերպությունները:

Հակադրվելով այն ժամանակներում գոյություն ունեցող մյուս՝ «ազգային ճարտարապետության» պատմական մոտեցմանը՝ Մազմանյանը, Քոչարը, նրանց ընկեր Կարո Հալաբյանը, ինչպես նաև ОПРА-ի գործընկեր այլ ճարտարապետներ, ազգային ճարտարապետությունը սահմանում էին իբրև «էությամբ՝ պրոլետարական, ներկայնակով՝ ազգային», որն ունակ է հարմարվելու տեղի սոցիալական, տնտեսական, կլիմայական և համատեքստային առանձնահատուկ պայմաններին:

Միքայել Մազմանյանը, Կարո Հալաբյանը և Եղիշե Չարենցը 1924 թվականին հիմնադրել և հրատարակել են «ՍՏԱՆԴԱՐՏ» պարբերականը:

ԼԵՎՈՆ ՉԵՐՔԵԶՅԱՆ
1927-2000

1960-ական թվականներին Խորհրդային Հայաստանի ճարտարապետության մեջ սկսեց զգացվել նոր ուտոպիայի շունչը՝ ուտոպիա, որում երևան եկան մարդեղենացման ու բնապահպանության սկզբունքները՝ զուգահեռ ուղի հարթելով իրենց համար ճարտարապետության և քաղաքաշինության ասպարեզում խրուշչովյան դարաշրջանի քաղաքական համակարգի պաշտոնական մոտեցման վերածված ուտիլիտարիզմի և գործառնականության կոշտ սկզբունքների կողքին:

Լևոն Չերքեզյանի ճարտարապետությունը դրա լավագույն օրինակներից է թերևս, որում նոր ուտոպիաները՝ կերպարանք ստանալով խորհրդային ճարտարապետության հաստատած կանոնների միջոցով, դրսևորվեցին իբրև մոդեռնիստական ճարտարապետական փորձեր: Չերքեզյանի հեղինակած որոշ կառույցներ ու շենքեր գտնվում են Սևանա լճի ափին:

Արվեստ Հայաստան հիմնադրամի շնորհառուներ

Հուլիս - Դեկտեմբեր, 2017 թ.

Հուլիս - Դեկտեմբեր, 2017 թ.

ԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ԿԱՊԱՆ

Արվեստ Հայաստան հիմնադրամի Արվեստագետների
2017 թ. առաջին բաց մրցույթի **շնորհառուները**

Համադրող՝ **Սոնա Ստեփանյան**

ԱՐՏԼԱԲԵՐԵՎԱՆ

ԱՅՐԻՆ ԱՆԱՍՏԱՍ ԵՎ **ՌԵՆԵ ԳԱԲՐԻ** (Տես էջ 19-ում)

ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՓԻՐՈՒԶԱ ԽԱԼԱՓՅԱՆ,

ԳՈՀԱՐ ՍՄՈՅԱՆ,

ՄԻԿԱ ՎԱԹԻՆՅԱՆ

ԱՐՏԼԱԲԵՐԵՎԱՆ

Քաղաքականացնելով կենացները.
Ցուցահանդես Նորթհեմփթոնում, 2015

Համաշխարհային ապստամբություն,
Քաղաքականացնելով կենացները.
Ցուցահանդես Նորթհեմփթոնում, 2015

ԱՐՏԼԱԲԵՐԵՎԱՆ-ը կոլեկտիվ է, որում ընդգրկված են Հովհաննես Մարգարյանը, Վարդան Ջալոյանը, Արթուր Պետրոսյանը, Արա Պետրոսյանը և Օլյա Ազատյանը:

Սեզոնային մայրիշխանություն, 2017

Սեզոնային մայրիշխանությունը արվեստի միջոցով կատարված հետազոտական աշխատանք է արտագաղթի հետևանքով գյուղում գենդերային դերերի, հատկապես՝ աշխատանքային դերերի փոփոխության վերաբերյալ: Միգրացիայի գենդերային հիմքը տղամարդու՝ իբրև «փող աշխատողի» դերն է: Երբ սկսվում է աշխատանքային սեզոնը, կանայք այդ ընթացքում սկսում են կազմել չափահաս բնակչության մեծամասնությունը՝ տանը և գյուղատնտեսության մեջ կատարելով սովորաբար տան տղամարդուն հատկացված պարտականությունները: Սկսվում է սեզոնային մայրիշխանությունը: Այս իրավիճակում կանայք ցուցաբերում են հսկայական աշխատասիրություն, կառավարման ձիրք և ստեղծագործականություն: Ինչևէ, արվեստագետները նշում են, որ գոյություն ունի նաև հեռակա կամ տրանսազգային հայրիշխանության պարադոքս, որը ձևավորվում է ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ: Ընտանիքի գլուխն իր ընտանիքը ղեկավարում է հեռավորությունից: Տրանսազգային ընտանիքներ են ձևավորվում, երբ միգրանտները ստեղծում են երկու ընտանիք, մեկը՝ հայրենիքում, մյուսը՝ աշխատանքի երկրում: ԱՐՏԼԱԲԵՐԵՎԱՆ-ի նախագիծը կենտրոնանում է միգրացիայի այս գենդերային էֆեկտների վրա:

ԱՐՏԼԱԲԵՐԵՎԱՆ-ի նպատակն է շարունակել ակտիվիստական արվեստի պրակտիկան, աջակցել ակտիվիստական խմբերին, կազմակերպել սեմինարներ և քննարկումներ ժամանակակից քաղաքական արվեստի մասին, մասնակցել սոցիալական և քաղաքական շարժումներին, սոցիալ-մշակութային նորարարական նախաձեռնություններին, ռազմավարություններ մշակել սոցիալ-քաղաքական խմբավորումների հետ, ինչը թույլ կտա ելք գտնել ստեղծված կացությունից: Նրանք փորձում են զուգադրել քաղաքական և արվեստի ուսումնասիրությունները, որոնել և հայտնաբերել ավտորիտար, շահագործող և կոռուպցիոն համակարգերի ձևավորմանը նպաստող թաքնված մեխանիզմները: Արվեստի պրակտիկայում այս խումբը հակված է հարաբերական և մասնակցային էսթետիկային՝ ժխտելով արվեստի պատրանքային գործառույթը: ԱՐՏԼԱԲԵՐԵՎԱՆ-ը և դրա անդամները մեծ հաջողությամբ ցուցադրվում են քաղաքական և ակտիվիստական արվեստի ասպարեզում:

ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել է 1960 թվականին, Երևանում, որտեղ և ապրում ու աշխատում է:

Երևանյան պատշգամբ 2, 2016
Յուղաներկ կտավի վրա,145 x 195 սմ

Սինդիկատ, 2014
Ապագան անցյալում, Կալենցի թանգարան, Երևան, Հայաստան

Սիրո շքերթ Բուրջ Համուդում, 2007 “d’Armenie”, Կեմպերի Ժամանակակից արվեստի կենտրոն

Միջոցներ և նպատակներ, 2017

Նախագիծն առաջարկում է ամբողջապես տեղանքին հարմարեցված ինստալացիա՝ իբրև միջոցների և նպատակների ընտրության խնդիրը ակտուալացնելու փորձ, զուգահեռներ տանելով Սոցիալիստական Մեծ Հեղափոխության հետ, որի հարյուրամյակը լրանում է այս տարի՝ 2017 թվականին: Գրիգորյանը հավատում է, որ միջոցներն ու նպատակները փոխշաղկապված են կամ նույնիսկ փոխադարձաբար որոշում են միմյանց, քանի որ յուրաքանչյուր միջոց ինքնին մի նպատակ է ներկա պահին, և յուրաքանչյուր նպատակ միջոց է ապագայում: Ուստիև, բնության նկատմամբ մարդու իշխանությունն ընդլայնելուն և մարդու կողմից մարդու շահագործումը վերացնելուն ուղղված նպատակները միանգամայն արդարացված են:

Միջոցներ և նպատակներ նախագիծը շարունակում է այն դրույթները, որոնք կարևոր դեր են կատարում հեղինակի ստեղծագործական գործունեության մեջ, որը վերաբերում է սոցիալիստական իդեալների վերագործարկմանը, Հայաստանի խորհրդային անցյալի հետ միասին անտեսված և անարդարացիորեն մերժված գաղափարների վերարժարժմանն ու վերանդրադարձին:

Միջոցներ և նպատակները վերստին հայացք է դարձնում տարածության ձևափոխությանը՝ բացելու և վերագործարկելու համար մոդեռնիստական ճարտարապետության կառուցվածքային գործառնականությունը, ինչպես նաև ներկայացնելու համար պատկերներ, որոնք երևակայական և ֆուտուրիստական ուրվականներ են՝ ներդրված տեղային միջավայրի մեջ և թույլ են տալիս, որ դիտողն ականատես լինի, թե ինչպես է տեղի ունենում անցյալի ու ապագայի հետ մարդու հանդիպումը և որոշ իմաստով ընկալի այն ինքնատիպ զգացողությունը, որը նա անվանում է «կոմունիստական խանդավառություն»:

Արման Գրիգորյանի վերջին ցուցադրություններից են՝
2016. *Կենսահաստատման երկիր*, Կալենցի թանգարան (Երևան), Ստիլ պատկերասրահ (Գյումրի) և Արվեստի թանգարան (Վանաձոր):
2015. *Կամք առ կյանք*, Ստիլ պատկերասրահ, Գյումրի, Հայաստան:
Այլևս երբեք, ՆՓԱԿ, Երևան, Հայաստան:
2014. *Ապագան անցյալում*, Կալենցի թանգարան, Երևան, Հայաստան: *Քայլ. ձևափոխության ու ձևաստեղծման միջև*, Նկարիչների տուն, Երևան, Հայաստան:
2013. *Արմենիկյան երազանք*, «Ականաթ» պատկերասրահ, Երևան, Հայաստան:

Արման Գրիգորյանի վերջին համադրողական գործունեությունը՝
2016. *Կենսահաստատման երկիր*, Կալենցի թանգարան (Երևան), Ստիլ պատկերասրահ (Գյումրի) և Արվեստի թանգարան (Վանաձոր):
2015. Աբստրակտ արվեստ, «Ականաթ» պատկերասրահ, Գյումրի-Եղեգնաձոր-Երևան, Հայաստան: *Կամք առ կյանք*, Ստիլ պատկերասրահ, Գյումրի, Հայաստան:
2014. *Քայլ. ձևափոխության ու ձևաստեղծման միջև*, Նկարիչների տուն, Երևան, Հայաստան:
2013. Վենետիկի 55-րդ բիենալեի հայկական տաղավար, Վենետիկ, Իտալիա:

ՓԻՐՈՒԶԱ ԽԱԼԱՓՅԱՆ

Ծնվել է 1983 թվականին, Մեծամորում: Ապրում և աշխատում է Երևանում:

Իմ տեղը դատարկ է (անհետացող քաղաքի հիշողությունները), 2017

Մեծամորի երեխաներին պատկերող 80-ական թվականների լուսանկար

Իմ տեղը դատարկ է (անհետացող քաղաքի հիշողությունները) նախագիծը պատմում է արվեստագետի երիտասարդության և մանկության տարիների կյանքի մասին և լեցուն է նրա տպավորություններով, վախերով ու հուշերով: Իր պատմությունը նա պատմում է ծննդավայրի՝ Մեծամոր քաղաքի նկարների միջոցով:
Իր և իր ընտանիքի պատմության վերապրման միջոցով արվեստագետը լուսանկարում է մանկության ծերացող քաղաքը, որից ամեն օր մի մասնիկ է պակասում, մի տուն է դատարկվում, մի փոս է ավելանում, մի ծառ է կտրվում, ինչպես տարիքի հետ պակասում են մարդկանց հիշողությունները:
Նախագիծը դիմանկար է՝ քաղաքի, անհատի, երկրի և ժամանակաշրջանի բարդ և փոխկապակցված դիմանկարը, որը ներառում է առանձին պատմություններ՝ գրքի գլուխների նման. քաղաք, մարդիկ, ընտանիք, ատոմակայան, հիվանդանոց, հանրակացարան, դպրոց, մանկապարտեզ: Յուրաքանչյուր այս մասը նորանոր հարցեր է բարձրացնում և ծնում ներկայի ու անցյալի պատկերներ:

Արվեստագետի բնակարանի պատուհանները 2014 թվականին՝ վաճառքի դրված ժամանակ

Փիրուզա Խալափյանի ցուցադրություններից են՝
2016: *Լուսանկարչի սեփական սենյակը*, Երևան:
2013: *Կին լուսանկարիչներ*, Երևան:
2012: *Արցախյան նկար*, Երևան:
2008-2009 *Տանը մոտիկ*, շրջիկ ցուցահանդես (Լոնդոն, Բելֆաստ, Թեսալոնիկե, Սոֆիա, Թբիլիսի, Երևան, Նիկոսիա, Բուխարեստ, Կրակով), Բրիտանական խորհուրդ:

Մեծամորի նախկին սպորտդպրոցի լողավազանը

ԳՈՀԱՐ ՍՄՈՅԱՆ

Ծնվել է 1978 թվականին, Գյումրիում, որտեղ և ապրում ու աշխատում է:

«Թափանցիկ» այլընտրանք, 2017

«Թափանցիկ» այլընտրանքը պոլիէթիլենային պատերով ալյումինե կաղապար է, որը հիշեցնում է փակ խորանարդ: Ինստալացիան, որը տեղադրվում է փողոցներում, հասանելի է մարդկանց համար, որոնք կարող են մտնել խորանարդի մեջ և գրել դրա թափանցիկ պատերին՝ բոլորին ի տես առաջարկելով առօրյա խնդիրների լուծումներ: *«Թափանցիկ» այլընտրանք* ինստալացիոն նախագիծը կարևոր ուղերձ է՝ ուղղված հասարակությանը և քննում է բազում գլոբալ հիմնահարցեր՝ անկախ ազգային և տարածքային պատկանելությունից: Այն առաջարկում է ընտրության տիրույթների և սահմանների հստակեցում՝ մղելով գիտակցական որոշումների, որոնցից և կախված է մեր ապագայի տեսլականը:

«Թափանցիկ» այլընտրանք
Գյումրիում

Գոհար Սմոյանի ցուցահանդեսներից են՝
2016. La bottega պատկերասրահ, Մեց, Ֆրանսիա: *Այնպես, ինչպես ուզում է*, Gallery 25, Գյումրի, Հայաստան: *Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի,* Հայկական ազգային մշակույթի թանգարան, Մոսկվա, ՌԴ:
2015. *Քրդստան,* Դիարբեքիր, Թուրքիա: United Colors of Benetton, Վենետիկի 56-րդ բիենալե:
2014. Այլընտրանքային արվեստի փառատոն, ՆՓԱԿ, Երևան, Հայաստան: *Borderland 02763,* Երիտասարդական փոխանակման ծրագիր, Ցիտաու, Գերմանիա:
2013. Մասնակցություն Արևելյան գործընկերության «Մշակույթ» ծրագրին, Լյուբլին, Լեհաստան: Արևելյան գործընկերության «Մշակույթ» ծրագիր, Ավստրիա, Կովկասյան մշակութային նախաձեռնությունների ցանց (CAUCULT):

ՄԻԿԱ ՎԱԹԻՆՅԱՆ

Ծնվել է 1972 թվականին, Երևանում, որտեղ և ապրում ու աշխատում է:





Գաղտնի հավասարումներ, 2016-17,
Նախնական էսքիզ, թանաք, գրաֆիտ, թուղթ

Գաղտնի հավասարումներ, 2017

Գաղտնի հավասարումները յուղաներկ 13 կտավների սյուիտ է՝ տարուբերվող կոնցեպտուալ, մինիմալիստական և աբստրակտ էքսպրեսիոնիստական նկարչության սահմաններին և ուսումնասիրում է արդի աշխարհում նկարչության նշանակությունը, խորհում է արվեստագետի ու դիտողի չարտաբերված կապի շուրջ: Այն կենտրոնանում է աշխարհի և իր մասին «գաղտնի գիտելիք» բացահայտելու՝ արվեստի ստեղծագործության ներհատուկ խոստման քննության վրա: Գործը մի հետաքննություն է՝ նվիրված արդի աշխարհում կտավի իմաստին և խորհում է արվեստագետի ու դիտողի միջև անխոս պայմանագրի շուրջ: Հենվելով միջնադարյան, մոդեռնիստական ու աբստրակտ նկարչության տարբեր պատմությունների սեփական ուսումնասիրությունների վրա՝ արվեստագետը դիմում է բազմաթիվ աղբյուրների, որպեսզի դեկոնստրուկցիայի ենթարկի չարտաբերված այս պայմանագիրը՝ հասնելու համար «ինտելեկտուալ ըմբռնման»:

2016. *Միկա Վաթինյան. Նկարագրություն,* Լուսադարան հայ լուսանկարչության հիմնադրամ, «Դալան» պատկերասրահ, Երևան:
2012. Գյումրիի ժամանակակից արվեստի 8-րդ բիենալե: *Փոխելով հանդիպման վայրը. Հայկական ժամանակակից վիզուալ արվեստի պատառիկներ*, InteriorDAsein, Բեռլին:
2008-2016. «Ագորա» թատրոնի պաստառների դիզայներ, Երևան, Հայաստան:

ՀԱՄԱԴՐՈՂՆԵՐ

Ադելինա Ջուբերյան ֆոն Ֆյուրշթենբերգ

Founder and President ad interim of ART for The World

Ադելինա Ջուբերյան ֆոն Ֆյուրշթենբերգը միջազգային ճանաչված համադրող է և հայտնի է որպես ժամանակակից արվեստի շրջանակներն ընդլայնող գործիչ: Նա առաջին համադրողներից է եղել, որն ակտիվ հետաքրքրություն է ցուցաբերել Եվրոպայի սահմաններից դուրս աշխատող արվեստագետների նկատմամբ և ձևավորել արվեստի հարցում բազմամշակութային մոտեցման ուրույն ձեռագիր: Ժամանակակից ցուցահանդեսների ինքնատիպ տեսլական ունենալով՝ նա ցուցադրություններ է կազմակերպել այնպիսի վայրերում, ինչպիսիք են՝ վանքերը, մեդրեսեները, հանրային մեծ կառույցները, հրապարակները, կղզիները, զբոսայգիները և այլն: Իր աշխատանքներում նա ձգտում է ապահովել ավելի մեծ համատեքստ վիզուալ արվեստի համար՝ վերածելով այն մեր կյանքի ավելի գործուն բաղադրիչի, և փորձում կենդանի երկխոսություն ձևավորել արվեստի տարբեր ուղղությունների միջև՝ փոխկապակցելով դրանք համաշխարհային սոցիալական հիմնախնդիրներին: Ադելինան նաև Ժնևի Ժամանակակից արվեստի կենտրոնի հիմնադիրն ու առաջին տնօրենն է: Ավելի ուշ ղեկավարել է Գրենոբլի Le Magasin Ժամանակակից արվեստի ազգային կենտրոնը, որին կից Համադրողների դպրոցը միջազգային մեծ ճանաչում է ձեռք բերել:

Մրցանակներ

2016. Շվեյցարիայի Արվեստի բարձրագույն «Prix Meret Oppenheim» մրցանակ՝ տրված Շվեյցարիայի Մշակույթի դաշնային բյուրոյի կողմից,
2015. Հայաստանի Հանրապետության մեդալ «Աշխատանքային վաստակի համար»,
2015. Վենետիկի 56-րդ բիենալեում Հայաստանի տաղավարի ազգային լավագույն մասնակցության համար «Ոսկե առյուծ» գլխավոր մրցանակ,
2008. եվրոպական Խորհրդի «Մշակութային միջոցառումների պարգև» «Արվեստ՝ հանուն աշխարհի» կազմակերպությանը մարդու իրավունքների մասին կարճամետրաժ ֆիլմերի նկարահանման և Եվրոպայում մի շարք բացառիկ և նորարարական արտիստիկ նախագծերի կազմակերպման համար,
1993. Վենետիկի 45-րդ բիենալեի ժյուրիի կողմից Գրենոբլի Le Magasin Ժամանակակից արվեստի ազգային կենտրոնին տրված հատուկ գնահատանք և մրցանակ:

Ավելին՝ Adelina von Fürstenberg

Ռուբեն Արևշատյան

Արվեստագետ, արվեստի քննադատ և անկախ համադրող, ԱԻԿԱ-Հայաստանի նախագահ **Ռուբեն Արևշատյանն** ապրում և աշխատում է Երևանում և դասավանդում Երևանի Ժամանակակից արվեստի ինստիտուտում: 1997-2004 թթ. եղել է Երևանի «ՀայԱրտ» մշակութային կենտրոնի գեղարվեստական ղեկավարը: 2004-2013 թթ. Հայկական բաց համալսարանի (Երևան) արվեստի ֆակուլտետում դասավանդել է արվեստի պատմություն առարկան: Հեղինակել է ժամանակակից արվեստին, ճարտարապետությանն ու տեսությանը նվիրված բազմաթիվ հոդվածներ, որոնք գլխավորապես առնչվում են քաղաքային և մշակութային փոխակերպումների թեմաներին և առավելապես կենտրոնանում հետսոցիալիստական համատեքստի վրա:

Համադրել և ներգրավվել է Great Atrophy, Parallel Reality, Local Modernities, Soviet Modernism 1955-1991/ Unknown History, Trespassing Modernities, A Parallel Modernity (Սան Պաուլոյի բիենալեի շրջանակներում, 2014) և այլ նախագծերում: Վենետիկի 54-րդ բիենալեում Manuals: Subjects of New Universality Հայաստանի ազգային տաղավարի (2011) և Վենետիկի 14-րդ ճարտարապետական բիենալեում The Capital of Desires Հայաստանի ազգային տաղավարի (2014) համադրողներից է: Sweet 60s միջազգային հետազոտական նախագծի համահեղինակներից և համադրողներից է: «Գեթի» հիմնադրամի Keeping it Modern ծրագրի շրջանակներում՝ ներկայումս գլխավորում է Սևանի Գրողների ստեղծագործական տան վերականգնման գիտական նախագիծը:

www.red-thread.org էլեկտրոնային ամսագրի խմբագրակազմի անդամ է:
Արվեստ Հայաստան հիմնադրամի խորհրդատվական մարմնի անդամ է:

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Արվեստների հայկական խորհուրդ

Արվեստների հայկական խորհուրդը Երևանում գործող շահույթ չհետապնդող կազմակերպություն է: Բազմապրոֆիլ մշակութային գործունեության միջոցով Արվեստների հայկական խորհուրդը նպաստում է Հայաստանում մշակութային քաղաքականությանը և կրթական մարտավարությունների զարգացմանը, փոխգործակցային կապ է ստեղծում վիզուալ և կատարողական արվեստների բնագավառում տեղական և միջազգային փորձի միջև: Անհատ գործընկերների աջակցությամբ և ՀՀ Մշակույթի նախարարության հետ հատուկ համագործակցությամբ՝ ԱՀԽ-ն 2017-ին մեկնարկում է ՍՏԱՆԴԱՐՏ ժամանակակից արվեստի առաջին տրիենալեն:

Մարինե Հարոյան, տնօրեն, marineharoian@gmail.com

Արվեստ՝ հանուն աշխարհի

«Արվեստ՝ հանուն աշխարհի» հասարակական կազմակերպությունը հիմնվել 1995 թվականին, Ժնևում, արվեստի և մշակույթի համընդհանուր լեզվի միջոցով բովանդակալից և տևական երկխոսություն ձևավորելու առաքելությամբ: «Արվեստ՝ հանուն աշխարհի» կազմակերպությունը, կենտրոնանալով մերօրյա գլխավոր հիմնախնդիրների վրա, մոբիլիզացնում է արվեստը, կինոն և ժամանակակից մշակույթը: Հիմնադրումից ի վեր՝ կազմակերպությունն իրականացրել է բազմաթիվ շրջիկ ցուցահանդեսներ և նկարահանել ավելի քան երեսուն կարճամետրաժ ֆիլմ: 1998 թվականից կազմակերպությունը կանոնավորապես համագործակցում է Սան Պաուլուի Առևտրի հանրային ծառայության (SESC São Paulo) տարածաշրջանային ճյուղի հետ: 2005 թվականին Իտալիայում հիմնվել է «Արվեստ՝ հանուն աշխարհի. Եվրոպա» քույր կազմակերպությունը:
2015 թվականին կազմակերպությունն իր տնօրեն Ադելինա Ջուբերյան ֆոն Ֆյուրշթենբերգի ղեկավարությամբ կազմակերպել է Վենետիկի բիենալեում Հայաստանի տաղավարը, որն արժանացել է «Ոսկե առյուծ» մրցանակի՝ իբրև լավագույն ազգային տաղավար:

Նունու Լուան, համակարգող, projects@artfortheworld.net
www.artfortheworld.net

Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատուն

Շվեյցարիայի դեսպանատունն աջակցում և խրախուսում է Շվեյցարիայի ու Հայաստանի միջև տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրթական հարաբերությունները: 1988 թվականից ի վեր՝ Շվեյցարիան համագործակցում է Հայաստանի հետ մարդասիրական ու զարգացման բնագավառներում: Դեսպան Լուկաս Գասսերն ու նրա թիմը տրիենալեի գործընկերներն են և իրականացնելու են Ֆելիչե Վարինիի ինստալացիան Երևանի երկաթուղային կայարանում (Էրեբունի համայնք): Շվեյցարիայի դեսպանատունը «Ստանդարտ» ժամանակակից արվեստի առաջին տրիենալեին աջակցում է նաև որպես հովանավոր:

Աննա Հովհաննիսյան, anna.hovhannisyan@eda.admin.ch
www.eda.admin.ch/armenia

Արվեստ Հայաստան հիմնադրամ

Արվեստ Հայաստան հիմնադրամը անկախ հասարակական կազմակերպություն է, որը նպաստում է Հայաստանում ժամանակակից արվեստի զարգացմանը: Երևանում գործող հիմնադրամը 2016 թվականին ստեղծել են Դավիթ և Ռաֆայել Նազարյանները՝ Հայաստանի մշակույթով հետաքրքրված ներդրողների խմբի հետ միասին: Հիմնադրամի առաքելությունն է՝ օժանդակել ժամանակակից արվեստի ոլորտում Հայաստանի ստեղծագործող անհատներին և բացահայտել նրանց ստեղծագործական ներուժը երկրի ներսում ու դրա սահմաններից դուրս: Հիմնադրամն արվեստագետներին աջակցում է դրամաշնորհներով, ինչպես նաև արվեստի և կրթական նոր ծրագրերով, որոնցում ներգրավված են տեղացի և դրսեկ արվեստագետներ, համադրողներ, տեսաբաններ:

Անուշ Զեյնալյան, տնօրեն, a.zeynalyan@foundationaa.com
www.foundationaa.com

HASRATYAN ՀԱՍՐԱԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ FOUNDATION

Հասրաթյան հիմնադրամ

Հասրաթյան հիմնադրամի հիմնական առաքելությունն է 1962-1975թթ Երևանի քաղաքապետ Գրիգոր Հասրաթյանի ժառանգության ուսումնասիրելն ու պահպանելը: Նրա ղեկավարությամբ՝ 1960 և 70-ական թվականներին, Երևանը արագորեն վերափոխվել է ակտիվ մշակութային միջավայրի: 1972 թ. Հայաստանի մայրաքաղաքում հիմնադրվեց Խորհրդային միության առաջին և միակ ժամանակակից արվեստի թանգարանը: Երևանը վերափոխվեց մոդեռնիստական նշանավոր շինությունների միջոցով: Ծաղկեցին արվեստները, գրականությունն ու կինոն և քաղաքը դարձավ գիտական կենտրոն: Այս ժամանակաշրջանի Երևանին բնորոշ էր նորարարությունների մշտական փնտրտուքը:
Հասրաթյան հիմնադրամը խթանում է ժամանակակից արվեստի և ճարտարապետության բնագավառներում հետագա հետազոտությունները և նպատակ ունի Հայաստանն ու Երևանը կրկին դարձնելու աշխարհի նորարարությունների կենտրոնը:

Intellectual Renaissance foundation

Ինտելեկտուալ Ռենեսանս հիմնադրամ

Ինտելեկտուալ Ռենեսանս հիմնադրամը ակտիվորեն պահպանում և զարգացնում է հայկական մշակույթն ու մտավոր ժառանգությունն ամբողջ աշխարհում: Այն խթանում է երաժշտության և գրականության բնագավառներում ուսումնասիրությունները: Գործունեության սկզբից հիմնադրամը զարգացրել է կարևոր նախագծեր, որոնք միտված են հայկական երաժշտական ժառանգությունը թվայնացնելուն:
Սկսած 2015-ից հիմնադրամը ձեռք է բերել ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում գտնվող Վիլյամ Սարոյանի առանձնատունը՝ նպատակ ունենալով այն վերածելու Սարոյանի ժառանգության ուսումնասիրման կենտրոնի և հուշային թանգարանի:
Ինտելեկտուալ Ռենեսանս հիմնադրամը նաև համագործակցում է Վիքիմեդիա Հայաստանի հետ՝ խթանելու հայերեն վիքիպեդիայի զարգացմանը:

ՄԱՄԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

«Արվեստ՝ հանուն աշխարհի», Ժնև, Միլան,
Ալեքսիս Գասպարյանց և Ֆեդերիկա Լո Կարմինե,
press@artfortheworld.net

Արվեստների հայկական խորհուրդ, Երևան,
Մարինե Հարոյան
info@artscouncil.am

GRAND HOTEL YEREVAN
LUXURY HOTEL

Գրանդ հոթել Երևան

«Գրանդ հոթել Երևանը» Հայաստանի մայրաքաղաքի ապրող լեգենդներից է, երկրի հանգուցային իրադարձությունների վկան և քաղաքի պատմության կարևոր դերակատարներից մեկը:

Շենքը կառուցվել է ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանի նախագծով և հյուրերի առջև բացվել 1928թ-ին: Առաջին հյուրն է եղել ռուս պոետ Անդրեյ Բելին:

Կարճ ժամանակում հյուրանոցը դարձավ յուրօրինակ մի ստեղծագործական տուն, որտեղ ապրում և ստեղծագործում էին հայ մշակույթի, գիտության ամենանշանավոր ներկայացուցիչները:

Բացման օրվանից հյուրանոցն առավելապես հայտնի էր «մշտական բնակիչներ» ունենալու ավանդույթով: Այստեղ են բնակվել նաև հայ իրականության մեջ առաջին ավանգարդ STANDARD ամսագրի հրատարակիչներ՝ բանաստեղծ Ե. Չարենցը, ճարտարապետներ Միքայել Մազմանյանը և Կարո Հալաբյանը: